ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՄՈ ՄՀԵՐԻ

ՀԱՅ ՖԻԴԱՅԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ 1880 - 1907 ԹԹ.

Է.00.01 - «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ - 2017

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր
Սարգսյան Ս.Թ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր
Պողոսյան Ս. Ա.

պատմական գիտությունների թեկնածու,
դոցենտ Եղիազարյան Կ.Ա.

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան
Հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017 թ. մարտի 7-ին, ժամը 1400-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. փետրվարի 3-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Հ.Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: XIX դարի վերջին քառորդին Օսմանյան կայսրության կողմից արևտահայության նկատմամբ կիրառվում էին բռնության ամենաբիրտ մեթոդներ: Դրանց որպես պատասխան և անմիջական հետևանք՝ իրենց կյանքն ու իրավունքները պաշտպանելու համար մի բուռ հայ քաջորդիներ ոտքի ելան և դիմեցին զենքի: Այսինքն՝ ինքնաբուխ ու տարերայնորեն սկսվեց ֆիդայական[1] շարժումը: XIX դարի վերջին քառորդին սկսված հայ ազգային-ազատագրական, շարժումը դրսևորվեց ինչպես ժողովրդի մտավոր, կրթալուսավորական, գաղափարախոսական, սոցիալական և այլ ասպարեզներում, այնպես էլ՝ զենքի դիմելու ձևով, որն, աստիճանաբար ծավալվելով, իր մեջ առավ Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր գավառներն ու Օսմանյան կայսրության այլ հայաշատ տարածքներ: Դրան մասնակցում կամ սատարում էր ժողովրդի զգալի մասը, ինչի արդյունքում այն միտում ուներ և աստիճանաբար **վերածվում էր շարժման[2],** սակայն իրադարձությունների ոչ նպաստավոր զարգացումների արդյունքում աստիճանաբար մարեց:

Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններում, Փոքր Հայքում, Կիլիկիայում աստիճանաբար ձևավորվում էին ֆիդայական ջոկատներ, որոնք պայքարում էին հայության իրավունքների, կյանքի ու գույքի պաշտպանության համար: Ժամանակակիցների հուշերում, գիտական աշխատություններում ու մամուլում սփռված են մեծաքանակ վկայություններ ու անդրադարձներ հայ ֆիդայական պայքարի դրդապատճառների, գաղափարախոսության և սխրանքների մասին: Սակայն դեռևս ամփոփ մի ուսումնասիրության անհրաժեշտություն է զգացվում, որ ներկայացնի հայոց պատմության այդ հերոսական փուլի իրադարձություններն ու արժանավայել գնահատի այդ հերոսների կատարած սխրանքները:

Ատենախոսությունում քննության են առնվում հայ ժողովրդի պատմության դժվարագույն մի ժամանակահատվածում՝ XIX դարի 80-ականներից սկսած

---

[1] Ֆիդայի (արաբերեն է և նշանակում է անձնազոհ, հանուն գաղափարի նահատակվող մարդ կամ փրկիչ), իսկ հայդուկ (հունգարերեն է, որը պարտիզանական պայքար մղող ազատամարտիկների տարածված անվանումն էր): Այդ օտարածին բառերը հոմանիշներ են, նույն իմաստն ունեն, ուստի մենք էլ դրանք հավասարազոր օգտագործում ենք:

[2] Այս կարևոր հանգամանքը նկատի ունենալով մեր հետագա շարադրանքում զուգահեռ օգտագործվում են **«պայքար» և «շարժում»** հասկացությունները, որոնք դասական իմաստով, բնականաբար, հավասարազոր չլինելով հանդերձ,այս դեպքում գրեթե նույնանում են, քանի որ այդ հերոսական պայքարը տարբեր փուլերում ձեռք է բերել նաև շարժման մակարդակ:

մինչև 1907 թ. ընկած փուլի առանցքային իրադարձություն հանդիսացող և Արևմտյան Հայաստանում տարերայնորեն ծավալված ֆիդայական պայքարի հիմնահարցերը: Ուսումնասիրության ընթացքում կատարվել է ընդգրկուն հետազոտություն. ոչ միայն ուսումնասիրել ենք բազմաքանակ արխիվային և այլ բնույթի վավերագրեր, հայ և օտար հեղինակների հայտնած տեղեկություններ ու վկայություններ, տպագիր սկզբնաղբյուրներ ու թեմային առնչվող աշխատություններ, այլև համեմատել ու համադրել ենք ֆիդայական պայքարի մասին այդ աղբյուրներում առկա տարբեր տեսակետերն ու կարծիքները, մանրամասն վերլուծել դրանք և հայտնել մեր մոտեցումները:

Ֆիդայական շարժման ժամանակագրությունը ներառում է 1880-ականներից մինչև 1907 թ., այսինքն՝ մինչև Սուլուխի կռիվը և Գևորգ Չաուշի ու շատ ֆիդայիների զոհվելը, որից հետո, փաստորեն, ֆիդայական կռիվներն Արևմտյան Հայաստանում աստիճանաբար սկսեցին մարել:

Ֆիդայական շարժումը պատմական տվյալ պահին թուրք բարբարոսների կողմից ոչնչացման եզրին հասցված հայության մի ստվար մասի՝ արևմտահայության գոյատևման հրամայականն էր: Նախախորհրդային շրջանում այդ մասին գրվել են մեծ թվով ուսումնասիրություններ, մամուլում տպագրվել են հայդուկների և ժամանակակիցների հուշեր: Խորհրդային ժամանակաշրջանում ագելված էր ֆիդայական շարժման մասին խոսելը, գրելը, առավել ևսորևէ նյութ հրապարակելը: Արխիվների անձեռնմխելի ֆոնդերում և գրապահոցներում էին պահվում ֆիդայական շարժմանն ու գործիչներին առնչվող բոլոր նյութերն ու գրքերը: Միայն խորհրդային ամբողջատիրական համակարգի լճացման շրջանում, իսկ ավելի ընդգրկուն դրա քայքայումից հետո զգալի թվով պատմաբաններ կարողացան ուսումնասիրություններ կատարել և իրենց խոսքն ասել ֆիդայական պայքարի մասին: Սակայն այսօր էլ, հատկապես նրա արդյունավետության տեսակետից, ֆիդայական շարժման մասին տարակարծություններ կան, և շատ հարցեր կարոտ են լուսաբանման:

Հայդուկային շարժման դրդապատճառների, գաղափարախոսության, անհատ ֆիդայիների ու նրանց քաջագործությունների մասին պահպանվել են զգալի քանակությամբ փաստաթղթեր, վկայություններ, հուշագրություններ: Գրվել են մեծ թվով պատմագիտական աշխատություններ և գեղարվեստական ստեղծագործություններ: Նշենք նաև, որ հայդուկային պայքարի ողջ պատմությունն իր բոլոր մանրամասներով, ամբողջական և սպառիչ կերպով մեկ ուսումնասիրությամբ ներկայացնելը դժվար է, քանզի դեռևս շատ մութ էջեր կան, որոնք պարզաբանելու, բացահայտելու կարիք են զգում: Իսկ շատդեպքերում հայդուկներից ոմանց ու նրանց գործողությունների մասին որևէ գրավոր փաստ կամ հիշատակություն կամ չի պահպանվել կամ դեռևս հայտնի չէ: Արդյունքում երբեմն որոշ իրադարձությունների ամբողջական պատկերը վեր հանելն ուղղակի անհնարին է դարձել:

Թեման արդիական է, քանի որ դրա ուսումնասիրությամբ հնարավոր է դառնում ըմբռնել տվյալ դարաշրջանի ընդհանուր աշխարհաքաղաքական իրավիճակը, որն զգալի ընդհանրություններ ունի այսօրյայի հետ և լուսաբանել չպարզաբանված և վիճահարույց մի խումբ հարցեր: Բազմաթիվ աղբյուրների հետազոտությունը հնարավորություն է ընձեռել ներկայացնելու մեծ տերութիւններ Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի, Օսմանյան կայսրության և մյուսների ծավալապաշտական շահերն ու հակասությունները և նրանց կողմից փոքր ժողովուրդների իրավունքների բռնաբարման բազմաթիվ դեպքերը:

Թեմայի ուսումնասիրության և նրանում բարձրացված հարցերի **նշանակությունը** կարևորվում է նրանով, որ այն հետագա սերունդների համար համանման հերոսացումների համար լավ դպրոց կարող է դառնալ և հող նախապատրաստել ապագայում ևս ազատագրական պայքարի համար:

Ատենախոսությունը կարևոր է ու առանձնահատուկ նաև նրանով, որ մանրազնին հետազոտվել են ֆիդայական շարժմանն անդրադարձող գրեթե բոլոր աղբյուրագիտական նյութերը: Ավելին, առաջին անգամ փորձ է արվել գրել ֆիդայական շարժման ամփոփ վերլուծական պատմությունը, որում զուգահեռահաբար դիտարկվել ու բաղդատվել են տարբեր աղբյուրներ, արխիվային նյութեր ու վավերագրեր, ժամանակակիցների հուշեր և խնդրո առարկայի վերաբերյալ ուսումնասիրողների կարծիքներն ու տեսակետները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ատենախոսության **նպատակն է** հայ ֆիդայական շարժման մասին արխիվային փաստաթղթերի, վավերագրերի, հրապարակված բազմաբնույթ նյութերի, գիտական աշխատությունների, հոդվածների, սփյուռքում ու Հայաստանում լույս տեսած գեղարվեստական ու հանրամատչելի գրականության մանրակրկիտ հետազոտության և դրանցում առկա փաստերի հիման վրա **ներկայացնել** XIX դարի 80-ական թվականներից Արևմտյան Հայաստանում ծավալված ֆիդայական շարժման ամփոփ պատմությունը: Ինչպես նաև՝

1. XIX դարի 70-80 թթ. Արևմտյան Հայաստանում ծավալված ֆիդայական շարժումը բազմակողմանի դիտարկել և ցույց տալ, որ դա ամենևին էլ դրսից ներմուծված երևույթ չէր: Ինչպես նաև, ներկայացնել, որ շարժումը տարերայնորեն ծնվել էր ժողովրդի ծոցում, նախաձեռնվել նրա կողմից և սկիզբ առել նախքան հայ ազգային կուսակցությունների հայտնվելը:

2. Տարբեր տեսանկյուններից քննարկել ու վերլուծել խնդրո առարկա հարցերի մասին հայ և օտար հեղինակների կարծիքները, տեսակետներն ու մեկնաբանությունները:

3. Ֆիդայական շարժումը քննության ենթարկել իրական լույսի ներքո՝ միշտ հավատարիմ մնալով անաչառության սկզբունքին:

4. Ուսումնասիրել ֆիդայական շարժման ժամանակագրությանն առնչվող պատմագիտական տեղեկությունները և ճշգրտել դրանք:

5. Գիտական շրջանառության մեջ դնել հայ ֆիդայական շարժման պատմության բաժանումը երեք փուլերի՝ սկիզբ, վերընթաց և ավարտ:

6. Կազմել Արևմտյան Հայաստանում և Օսմանյան Թուրքիայի տարբեր վայրերում գործած հայ հայդուկների ցուցակներ:

7. Քննել այն ընդհանրություններն ու առանձնահատկությունները, որոնք եղել են հայ և այլ ազգերի հայդուկային կամ ֆիդայական շարժման միջև:

8. Ավելի խորությամբ ուսումնասիրել հայ ֆիդայական շարժումը՝ առավել ուշադրություն դարձնելով արխիվային փաստաթղթերին:

9. Հստակեցնել ֆիդայական շարժման առաջացման հանգամանքները:

10. Պարզել ձախողումների պատճառները:

11. Ներկայացնել մեծ տերությունների դիրքորոշումները:

12. Վերլուծել հայ ֆիդայական շարժման խաղացած դերը և նրա ունեցած պատմական նշանակությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ: Ուսումնասիրության գիտական նրույթը այն է, որ արխիվային նյութերի, ինքնակենսագրությունների, հուշերի, ժամանակակիցների գրառումների, մամուլում եղած նյութերի և մեծաքանակ պատմագիտական աշխատությունների մանրակրկիտ հետազոտության հիման վրա՝

ա) պարզաբանվել են ֆիդայական շարժման վերաբերյալ շատ մանրամասներ,

բ) կատարվել է շարժման բաժանում առանձին փուլերի,

գ) կատարվել է Արևմտյան Հայաստանի և օսմանյան կայսրության տարբեր վայրերում ծավալված պայքարի հանգամանալից ուսումնասիրություն,

դ) քննարկվել և վերլուծվել են տարբեր հեղինակների թեմային առնչվող հակասական կարծիքներ,

ե) առաջին անգամ հրապարակի վրա է դրվում հայ ֆիդայական շարժման ամփոփ (բնականաբար ոչ սպառիչ) պատմությունը,

զ) հստակեցվել է ֆիդայական շարժման մեջ հայ հոգևորականության խաղացած կարևոր դերակատարությունը,

է) ներկայացվել է ֆիդայական շարժման մեջ հայ կնոջ ունեցած մեծ ներդրումը,

ը) պարզաբանվել է ֆիդայական շարժման մեջ ազգային կուսակցությունների (Արմենական, ՀՅԴ, Հնչակյան) ունեցած կարևոր դերակատարությունը,

թ) ֆիդայական շարժման ընթացքում եղած կարևոր դեպքերի և անձերի վերաբերյալ գիտական շրջանառության մեջ են դրվում զգալի քանակությամբ նոր փաստեր, վավերագրեր, նախկինում գոյություն ունեցող ցուցակները[3] լրացվել են, հնարավորինս ճշգրտվել:

---

[3] Դրանցից, թերևս, ամենածավալունն ու համեմատաբար ճշգրտվածը «Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հարիւրամեակ, ալբոմ-ատլաս Ա. հատոր-

ժ) համոզիչ փաստերի վկայակոչմամբ ապացուցվել է, որ հայ ֆիդայական շարժումը սկզբնավորվել ու ծավալվել է արևմտահայության շրջանում տարերայնորեն, և որ այն երբեք դրսից ներմուծված, հրահրված կամ կազմակերպված չի եղել:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ: Ատենախոսությունը ժամանակագրական առումով ընդգրկում է 1880-ական թվականներից մինչև 1907 թ. ընկած ժամանակահատվածը: Քանի որ հիմնականում 1880-ական թվականներից են սկսում ձևավորվել ֆիդայական ջոկատներ, որոնք իրենց պայքարը շարունակում են մինչև 1907 թ.:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Ուսումնասիրությունը կատարվել է համեմատության, պատմաքննական համադրման և վերլուծության, մեթոդների անշեղ կիրառմամբ: Ատենախոսությունը գրելիս օգտագործվել են արխիվային, մատենագիտական, փաստավավերագրական աղբյուրներ, հայդուկային պայքարի մասնակից ֆիդայապետերի ու շարքային հայդուկների և ականատեսների հուշերն ու հիշատակարանները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը և նրանում առկա դրույթները կարող են օգտակար լինել նշված ժամանակաշրջանին և, մասնավորապես, ֆիդայական շարժմանը առնչվող ուսումնասիրությունների ու աշխատությունների համար: Ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել նաև օսմանահպատակ մյուս ժողովուրդների պատմությամբ հետաքրքրվող մասնագետների համար: Միևնույն ժամանակ, ատենախոսության մեջ վկայակոչված փաստերն ու իրադարձությունների անաչառ ներկայացումը կարող են հրաշալի օրինակ ծառայել մատաղ սերնդի դաստիարակության տեսանկյունից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Նոր պատմության բաժնում:

Ատենախոսության դրույթները լուսաբանվել են հեղինակի հրատարակած յոթ գիտական հոդվածներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՔԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ: Ատենախոսության աղբյուրագիտական հիմքը Հայաստանի ազգային արխիվում, Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանում գտնվող արխիվային փաստաթղթերը, վավերագրերն ու այլ տեսակի սկզբնաղբյուրներն են: Խիստ կարևոր են տպագիր սկզբնաղբյուրներն ու ֆիդայական շարժման

դիւցազնամարտ 1890-1914» հրատարակությունն է, որը ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի կողմից է լույս է ընծայվել Լոս Անջելեսում, 1992 թվականին:

մասնակիցների հուշերը, հիշատակարանները, նամակները, ականատեսների վկայությունները, զանազան պատմություններ, մամուլում տպագրված նյութեր:

Ֆիդայական շարժման պատմությունը ներկայացնելու տեսանկյունից անփոխարինելի են **«Նիւթեր Հ.Յ.Դաշնակցութեան պատմութեան համար»** տասը հատորով լույս տեսած նյութերի ժողովածուն[4]: Փաստահարուստ այս հատորները, որոնք կազմված են բարեխիղճ, պրոֆեսիոնալ բարձր մակարդակով և նյութի ու ժամանակի խորը ընկալմամբ, մեծաքանակ վավերագրեր են պարունակում ֆիդայական շարժման պատմության վերաբերյալ:

Կարևոր փաստական նյութեր են պարունակում նաև «Դիւան Հ.Յ.Դաշնակցութեան» երկհատորյակը[5] և Դիվան հայոց պատմության[6], ՀՅԴ ծրագիրը[7], Եվրոպացիների կարծիքը Հայկական դատի մասին[8], Արմենական և Ռամկավար կուսակցությունների ծրագրերը[9], Ծրագիր Հնչակյան կուսակցության[10], Բանբեր Հայաստանի արխիվներում տպագրված որոշ վավերագրեր[11] և այլ սկզբնաղբյուրներ:

Կարևոր աղբյուրագիտական արժեք են ներկայացնում դաշնակցական նշանավոր գործիչ Ռուբենի «Հայ յեղափոխականի մը յիշատակները» յոթ հատորներում ամփոփված աշխատությունը[12]: Ֆիդայական շարժման ակտիվ մասնակցի և հայ ժողովրդի փրկության գործի նվիրյալի ներկայացրած մեծիմասամբ հավաստի տեղեկությունները լույս են սփռում տվյալ պատմական դարաշրջանի ու դեպքերի վրա: Ուսումնասիրության համար կարևոր են նաև Անդրանիկի, Գևորգ Չաուշի, Աղբյուր Սերոբի, Նիկոլ Դումանի, Սմբատի, Խանասորի Վարդանի, Արմենակ Եկարյանի, Միհրան Տամատյանի և մյուս հերոսների թողած հուշերն ու հիշատակարանները, Հ.Երամյանի, Ա.Ալպոյաճյանի, Կ.Սասունու, Սարգիս և Միսաք Բդեյանների, Սիրվարդի, Ս.

---

[4] Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, 10 հատորով, Բ հրատարակություն, բոլորն էլ լույս են տեսել՝ Պեյրութ, տպ. Համազգայինի Վահէ Սէթեան, հատոր Ա, 1984, 1985, Գ՝ 2007, Դ՝ 1982, Ե՝ 2007, Զ՝ 2010, Է՝ 2010, Ը՝ 2011, Թ՝ 2012, Ժ՝ 2014:

[5] Դիւան Հ.Յ.Դաշնակցութեան, հ. 1, Պօսթըն, 1934 և հ. 2, 1938:

[6] Դիւան Հայոց Պատմութեան, գիրք ԺԳ, Հարստահարութիւնները Տաճկահայաստանում, վաւերագրեր 1801-1888, Թիֆլիս, 1915:

[7] ՀՅ Դաշնակցութեան Ծրագիրը, Ժնև, 1906:

[8] Եվրոպացիների կարծիքը Հայկական դատի մասին, Ժնևվ, 1907:

[9] Արմենական կազմակերպութիւն, ՌԱԿ հիմնական ծրագրեր, կանոնագրեր և վաւերագրեր, Պեյրութ, 1988:

[10] Ծրագիր Հնչակեան կուսակցութեան, Լօնտօն, 1897:

[11] Բանբեր Հայաստանի արխիվների, Ե., 1976, թիվ 2:

[12] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հհ. Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Թեհրան, 1982:

Վրացյանի, Հ. Տասնապետյանի, Ս. Սապահ-Գյուլյանի, Մ. Վարանդյանի, Ի. Տերտերյանի, Մ. Ավետյանի, Ղ. Չարըգի և ուրիշների աշխատությունները[13]:

Ուսումնասիրության համար որպես դեպքերի անմիջական արձագանք և տարողունակ փաստական աղբյուր, օգտագործել ենք նաև պարբերական մամուլում հրապարակված տասնյակ հոդվածներ ու վկայություններ ինչպիսիք են «Հայրենիք», «Վէմ» հանդեսները, «Դրօշակ», «Ազատամարտ», «Հնչակ», «Արմենիա», «Արծուի Տարոնոյ», «Արձագանք», «Երկրի ձայն», «Հորիզոն», «Նոր կյանք», «Պայքար», «Ռազմիկ», «Ազատամարտ», «Հայք», «Մշակ», «Յեղափոխական ալպոմ», «Իրավունք», «Նոր դար» և այլ պարբերականների ու հանդեսների էջերում: Թեմային առնչվող բավականին նյութեր կան նաև ՀՅԴ պաշտոնաթերթ «Դրօշակ»-ի 1902, 1903, 1904 թթ. նյութերի ժողովածուում[14]:

Նշենք, որ թեմայի ուսումնասիրվածության առումով կարևոր է նաև այն փաստը, որ շատ հեղինակներ են իրենց աշխատություններում անդրադարձել ֆիդայական շարժմանը, ուսումնասիրություններ նվիրել առանձին ֆիդայիների կենսագրություններին, նրանց անցած ճանապարհի վերլուծությանը[15], կամ

---

[13] Սարգիս և Միսակ Բդէեան, Հարազատ պատմութիւն Տարօնոյ, Գահիրէ, 1962, Սասունի Կ., Սարերու Ասլանը, (Գէորգ Չաուշի կենսագրավէպը), Պէյրութ, 1966, Հրայրի դերը հայ ազատագրական շարժման մէջ, Պէյրութ, 1964, Պատմութիւն Տարօնի աշխարհի, Պէյրութ, 1956, Սիրվարդ, Արամ Աչըգպաշեան (Հերոս Փոքր Հայքի), Փրովիտէնս 1957թ, Վրացեան Ս., Խանասորայ Վարդանի յիշատակարանը, Ե., 1990, Տասնապետեան Հ., Հ. Յ. Դաշնակցութեան յեղափոխական-մարտական գործունեութիւնը, Դրօշակ, թիւ 21, էջ 18-29, թիւ 22, էջ 28-38, Աթենք, 1994, Սապահ-Գիւլեան Ս., Փոքր-Հայքի յիշատակներ, Չիկագօ, 1917, Վարանդյան Մ., Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, Ե., 1992, Տէրտէրեան Ի., Հայկական գոյամարտը, հատոր 6, Թեհրան, 1957, Աւետեան Մ., Հայ ազատագրական ազգային հիսնամեայ 1870-1920 թթ. յուշամատեան եւ զօր. Անդրանիկ, Փարիզ, 1954, Չարըգ Ղ., Յուշամատեան Բարձր Հայքի, Կարինապատում, Պէյրութ, 1957, Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Հայ Կեսարիոյ, հ.Ա, Գահիրէ, 1937թ, Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Մալաթիոյ Հայոց, Պէյրութ 1961, Ալպոյաճյան Ա., Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց, Գահիրէ, 1952, Անդրանիկ, Մարտական հրահանգներ, Ժընեվ, 1906, Անդրանիկ, Զօր.Անդրանիկ կը խօսի, Փարիզ 1921, Նիկոլ-Դուման (Գիծեր իր կեանքէն)« Պուքրէշ« 1933թ« Աղբիւր Սերոբ եւ Գէորգ Չավուշ, Աթէնք 1933, Մեհրաբյան Սարգիս (Խանասորա Վարդան, Շատախի Առյուծ), Խանասորա Վարդանի (Մեհրաբյան Սարգիս ?-1943թթ) յիշատակարանը, Երևան, 1992, Տամատեան Մ., Իմ յուշերէս, Պեյրութ, 1985, Եկարեան Ա., Յուշեր Արմենակ Եկարեանի, Պեյրութ, 1985, Երամեան Յուշարձան Վան-Վասպուրականի, Աղեքսանդրիա, 1929, հ.Ա, Հայրենիք 1958թ:

[14] Դրօշակ «Հայ Յեղափոխական Դաշնակցութեան» օրգան, 1902, 1903, 1904 (վերահրատարակութիւն), Պեյրութ, 1984:

[15] Արսեն Տիրան, Մխօ Շահէն Սէֆէրեան, Պոսթրն, 1903, Արամ Երէցեան, Գևորգ Չավուշ, Հալէպ, 1952, Ավետյան Մ., Հայ ազատագրական ազգային հիսնամյա 1870-1920թթ հուշամատյան զորավար Անդրանիկ, Փարիզ, 1954, Սիրվարդ, Արամ Աչըգպաշեան, Փրավիտէնս, 1957, Սասունի Կ., Հրայրի դերը հայ ազատագրական շարժման մէջ,

առանձին մարտերին և իրադարձություններին[16]: Հետազոտության ընթացքում առանձնակի ուշադրությամբ ենք անդրադարձել ականավոր պատմաբաններ Լեոյի, Մ. Ներսիսյանի, Ծ. Աղայանի, Վ. Պարսամյանի, Հ. Սիմոնյանի, Ա. Համբարյանի, Ռ. Հովհաննիսյանի, Վ. Ղազախեցյանի, Հ. Հարությունյանի, Ա. Մելքոնյանի, Ս. Սարգսյանի, Ս. և Հ. Պողոսյանների, Ա. Ներսիսյանի, Հ. Կարապետյանի, Հ. Գևորգյանի, Ռ. Սահակյանի, Կ. Քարամյանի և մյուսների այն աշխատություններին, որոնք վերաբերում են կամ առնչվում են այս ուսումնասիրությանը: Մեզ համար արժեքավոր են հայ ազգային կուսակցությունների տվյալ ժամանակաշրջանին վերաբերող փաստաթղթերը, ինչպես նաև օտար հեղինակների աշխատությունները, որոնք իրական պատկերացում կարող են տալ այդ ժամանակահատվածի պատմական անցուդարձերի վերաբերյալ:

Կարևորում ենք նաև թուրք պատմաբանների աշխատությունների դիտարկումները: Հայկական հարցին անդրադառնալով՝ թուրք պատմաբանները հընթացս խոսել են նաև հայդուկային պայքարի մասին: Հարկ է շեշտել, որ թուրքական պաշտոնական պատմագրություն կոչվածը, ըստ էության, նույնական է պատմության խեղաթյուրմանը, հատկապես, երբ խնդիրը վերաբերում է Հայկական հարցին: Թուրքական պատմագիտությունը հիմնովին ժխտում է, որ հայությունն Օսմանյան Թուրքիայում իրավազուրկ և կեղեքված վիճակում էր, իսկ հայերի ազատագրական շարժումը համարում է օտար միջամտության արդյունք, հայերին՝ «անհավատարիմ ազգ», որն իբր դավաճանել է «օսմանյան հայրենիքին»: Նույն նպատակն ունի Յուսուֆ Հալաջօղլուի՝առհասարակ հայկական կոտորածները և ցեղասպանությունը ժխտելու ծավալուն փորձը և մի շարք այլ հեղինակների աշխատություններ[17]:

Պէյրութ, 1964, Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, գիրք Ա, Ե., 1996, Գևորգյան Հ., Պետոն, Ե., 2000, և այլն:

[16] Սասուն-Մուշի կռիվները, Ժնև, 1906, Օնիկ, Մօսունի և Զօռի արշավանքները, Հայրենիք 1905, Լևոն Լիլէճեան, Անդրանիկի բերնով Առաքելոց վանքի կռիվը, Պէյրութ, 1966 և այլն:

[17]Documents Diplomatiques Ottomans: Affaires Arméniennes (ed. by Bilâl Şimşir), vol. 1 (1886-1893). Ankara, 1985. Y u s u f H a l a ç o ğ l u. Ermeni tehciri (4 baski). Istanbul, 2004. T a n e r A k ç a m. Türk Ulusal Kimliği ve Ermeni Sorunu. Istanbul, 1993. S. K o ç a ş. Tarih Boyunca. Ermeniler ve Türk – Ermeni ilişkileri. Ankara, 1967. B. N. Ş i m ş i r. The Genesis of the Armenian Question. Ankara, 1983 (Turkish Historical Society, ser. VII, № 84). B. N. Ş i m ş i r. Ingiliz Belgelerinde Osmanli Ermenileri, 1856-1880. Ankara, 1986. K a m u r a n G ü r ü n. Ermeni Dosyasi. Ankara, 1988. E s a t U r a s. The Armenians in History and the Armenian Question. Istanbul, 1988. M e h m e d H o c a o ğ l u. Arşiv vesikalariyla Tarihte Ermeni Mezâlimi ve Ermeniler. Ankara, Istanbul, 1976. H ü s e y i n N â z i m Pa ş a. Ermeni Olaylari Tarihi, kis. 1-LV, kis. 2-VIII. Ankara, 1994. T ü r k ö z u K e m a l H a l i l. Osmanli ve Sovyet Belgeleriyle Ermeni Mez âlimi. Ankara,1982, XII.

Օրինակ՝ թուրք պատմաբան Չենգիզ Քյուրշատի կարծիքով «հայ ահաբեկչական կազմակերպությունների» գործողությունները եղել են ծրագրված և ղեկավարվել են արտասահմանից, լայն աջակցություն են գտել եկեղեցու և միսիոներական կազմակերպությունների կողմից: Այդ իրականության հետ որևէ աղերս չունեցող տեսակետը կիսում են նաև թուրք պատմաբաններ Հիքմեթ Օյզդեմիրը, Նիյազի Բերքեսը, Էնվեր Զիյա Քարալ և ուրիշներ[18]:

Հրապարակի վրա գտնվող իրենց ձեռնտու գրականությունը թարգմանում են անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ինչպես նաեւ ռուսերեն լեզուներով[19]:

Շարունակելով հին ավանդույթները՝ թուրքերը մեր օրերում էլ հիմնահարցի խեղաթյուրումը իրականացնում են պաշտոնական մակարդակով: Բանը հասել է այնտեղ, որ դրանով զբաղվում է նույնիսկ Թուրքիայի զինված ուժերի Գլխավոր շտաբը[20]: Նրա կայքէջում պարբերաբար տեղադրվում է հակահայ թեմայով գրականություն, որից առանց որևէ սահմանափակման հնարավոր է օգտվել: Կայքէջում ցուցադրված է այսպես կոչված «Documentation Hall On Armenian Question» («Հայկական հարցի փաստաթղթերի սրահ»):

Պատմության տխրահռչակ զեղծարարներ Զ. Բունյաթովին, Ա. Մամեդովային ու մյուսներին միմյանցից առաջնության դափնին խլելու ջանքերով սկսել են ձայնակցել շատերը: Նրանցից ազգությամբ աջար Յուսիֆ կըզի Վերդիեան իր «Առաջին համաշխարհային պատերազմը եւ Կովկասի մահմեդական-փախստականները» հոդվածում, խեղաթյուրելով փաստերը, հայտարարում է, որ հայերը եկվորներ են և տարածաշրջանում «անելիք չունեն»[21]: Իսկ Մուսա Գասիմլին, հարցականի տակ դնելով հայերին ու Հայկական հարցը, երկար պատմական էքսկուրսներից հետո եզրակացնում է, որ հայերը դեռ ամբողջովին ձևավորված ազգ չեն, իսկ «այսպես ասած հայկական հարցը ոչ այլ ինչ է, եթե ոչ ռուսների և մյուս հզորների հնարած ջոկեր խաղաքարտ՝ անհրաժեշտության դեպքում օգտագործելու համար»[22]:

Վերջին տասնամյակներում նկատելի է նաև պետական թեզից տարբերվող տեսակետ ունեցող թուրք պատմաբանների որոշ աշխուժացում:

---

[18]**E. Z. K a r a l.** Armenian Question (1878 – 1923). Ankara, 1975. Նույնի՝ Osmanli Tarihi, Cilt 8, Ankara, 1988, s. 265-268.

[19]Սահակյան Ռ., 1915 թ. արևմտահայ ինքնապաշտպանական կռիվների խեղաթյուրումը թուրքական պատմագրության կողմից, Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը. Միջազգային գիտաժողովի նյութեր, 2011 թ. հունիսի 24 – հուլիսի 1, Երևան-Ստեփանակերտ, Ե., 2011, էջ 53-54:

[20] www. allturkey.com

[21]Юсиф кзы Вердиева, Первая Мировая война и Кавказские мусулманы-беженци, журнал <<Истина>>, Астраханъ, № 2, стр. 34-35.

[22]Гасымлы Муса, Анатолия и Южный Кавказ в 1724-1920-е гг.: В поисках исторической истины, М., 2014, стр.74.

Դրանցից առավել արգասաբեր գործունեություն են ծավալել պատմաբաններ Թաներ Աքչամը, Սելիմ Դերինգիլը, Հալիլ Բերքթայը, Քադիր Աքինը, վերլուծաբան-հրապարակախոսներ Այշե Հյուրը, Մեհմեդ Փոլաթելը և Նազիֆե Քոսուքօղլուն և ուրիշներ, որոնց քանակը գնալով ավելանում է հատկապես Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցից հետո:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, որոնք բաղկացած են ենթագլուխներից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից, և հավելվածից (ֆիդայիների ցուցակներ):

Ներածությունում ամփոփ կերպով ներկայացված են ատենախոսության ընդհանուր բնութագիրը, թեմայի գիտական նշանակությունը, արդիականությունը, ուսումնասիրության նպատակներն ու խնդիրները, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը և մեթոդաբանությունը: Ներկայացված են ատենախոսության փորձաքննության արդյունքները, աղբյուրագիտական հենքը և թեմայի ուսումնասիրվածության աստիճանը:

«ՖԻԴԱՅԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆԱԽԱՔԱՅԼԵՐԸ, ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՈՒ ԿԱՆԱՆՑ ԴԵՐԸ ԴՐԱՆՈՒՄ ԵՎ ԶԵՆՔԻ ՀԱՅԹԱՅԹՈՒՄԸ» առաջին գլուխը բաղկացած է վեց ենթագլուխներից:

«Արևմտյան Հայաստանը ֆիդայական շարժման նախօրյակին» ենթագլխում հանգամանորեն ներկայացված են արևմտահայության սոցիալ-տնտեսական, հոգևոր, իրավական, քաղաքական և հոգեբանական ծանր պայմանները, և այն հանգամանքները, որոնք պատճառ դարձան հայդուկային պայքարին:

Օսմանյան երբեմնի հզոր կայսրությունը XIX դարի վերջին անկում էր ապրում և աստիճանաբար կործանվում: Պետական թալանը, լրտեսության ծաղկումը, մարդկային իրավունքների զանգվածայինոտնահարումները օսմանյան կայսրությունը վերածել էին ժողովուրդների բանտի[23]: Իշխանությունները, հայերի ունեցվածքն ու հողերն ապօրինաբար խլելով ու մահմեդականներին տալով, նրանց իսկական պատուհաս էին դարձնում արևմտահայության գլխին[24]:

---

[23] Голобородько, Турция, Москва, 1912, Մարկոսյան Ս., Արևմտահայության վիճակը 19-րդ դարի վերջերին, Ե.,1968, Ինճիկյան Հ., Օսմանյան կայսրության անկումը, Ե. 1984, Մուսթաֆա Նէտիմ, Հայ եղեռնը. իմ վկայութիւններս, Գահիրէ 1925, Մերձավոր և Միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 5, Թուրքիա, Ե., 1970, Դիվան Հայոց Պատմության, գիրք ԺԳ, Հարստահարութիւններ Տաճկահայաստանում, Թիֆլիս, 1915 և այլն:

[24] ՀԺՊ ԳԱ հրատարակություն, հ.6, Ս.Պողոսյան, Քրդերը և Հայկական հարցը, Ե.,1991:

Արևմտահայության ծանր վիճակի մասին բազմաթիվ վկայություններ կան հայ և օտար հեղինակների աշխատություններում: Դրանցից՝ իբրև անկողմնակալ, առավել կարևոր են օտար հեղինակների աշխատությունները: Այսպես, հայերի հարստահարությունների և կրած զրկանքների մասին պատմում են Էլիզե Ռեկլյուն[25], Հովհաննես Լեփսիուսը[26], Մալքոլմ Մակկոլը[27], Հենրի Լինչը[28] և շատ ուրիշներ: Բազմաթիվ փաստեր են պարունակում ,,Положение Армян в Турции до вмещательства держав в 1895г,, , ,,Братская помощь пострадавшим в Турции армянам,,[29]և այլ բազմաթիվ ուսումնասիրություններ: Օրինակ՝ եվրոպացի հեղինակ Էտուառ Տռիոն իրավացիորեն գրում է, որ «թիւրքը մնացած է երբեմնի մոլեռանդ «միւսլիմ» ը ...ի տես իր թշնամիին (հայի-Կ. Ա.) անդիմադրելի յառաջադիմութեանցը՝ այդ ատելութիւնը արիւնախանձ կիրքի մը կը փոխուէր, և որ իր յագուրդը կը գտնար զազրելի կոտորածներու մէջ»[30]:

Առաջին ենթագլխում աղբյուրագիտական հարուստ հենքի վրա ներկայացվում է այն իրողությունը, որ XIX դարի վերջին քառորդում Օսմանյան կայսրությունն այլևս չուներ իր երբեմնի հզորությունը, տնտեսությունն ու առևտուրը քայքայված վիճակում էին, քանի որ այդ ասպարեզներում կարող ուժ հանդիսացող ոչ մահմեդականների նկատմամբ տարվում էր վաղօրոք մշակված ծուլման և ոչնչացման պետական քաղաքականություն: Այդ տխուր իրողության ըմբռնումը նպաստեց, որ արևմտահայության մոտ տեղի ունենա ինքնագիտակցության և քաղաքական հասունացման առաջընթաց, որը հանգեցրեց արդարացի ընդվզման՝ ֆիդայական պայքարի տեսքով: «Ցեղին ուժականութեան արտայայտիչ երիտասարդութիւնը սրբազան հրայքէ մը բռնուած՝ նետուեցաւ բոցավառելու ժողովրդային զանգուածները եւ գործելու ազատագրական անկարելի թուած հրաշքը»[31]:

«Առաջին ընդվզումներն ու ֆիդայական շարժման նախաքայլերը» ենթագլխում ներկայացված են շարժման առաջացման պատճառները, նախաքայլերը, առաջին ֆիդայիներին ու նրանց գործունեությունը:

Մինչ ֆիդայական շարժման զանգվածային փուլը՝ 1880-ական թթ., Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում ևս եղել են ըմբոստացման դեպքեր: «Ազատագրական առաջին սերունդի առաքեալները գերագոյն

---

[25] Էլիզէ Ռեկլիւ, Լազիստան, Հայաստան եւ Քուրդիստան, Վաղարշապատ, 1893:

[26] Տօքթ.Եօհաննէս Լեփսիուս, Հայաստանի ջարդերը, Կ.Պոլիս, 1919:

[27] Малкькольм Макколль, Султан и державы, С-Петербург, 1897:

[28] Հենրի Լինչ, Հայաստան. ուղեւորութիւններ եւ ուսումնասիրութիւններ, բ հատոր, Տաճկահայաստան, Կ.Պոլիս, 1914:

[29] Братская помощь пострадавшим в Турции армянам, Москва, 1897.

[30] Էտուառ Տռիо, Արեւելեան խնդիրն եւ Հայկական հարցը, իր ծագումէն մինչեւ մեր օրերը, Կ.Պոլիս, 1913, էջ 612:

[31] Տեփոյեան Պ., Ատոմ Ասլանեան, Պէյրութ, 1988, էջ 17:

վճռականութեամբ ամենադաժան մահերու տեսակներն իսկ արհամարհելով նետուեցան ահաւոր պայքարներու մէջ: «Կամ մա'հ, կա'մ ազատութիւնը»-ը, «Այժմ կամ երբեք»-ը իրենց համար դարձան անվերածելի հաւատամք:…Ինքնամոռացումի սրբազան խենթեր էին անոնք, որ կը դիմէին դէպի կրակի մկրտութիւն…»[32]-, գրում է Ճերեճյանը: Այդ մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Ռուբենը՝ նշելով, որ դեռ դարակեսին հայերի ըմբոստությունները վարակել էին Մշո դաշտը[33]: Եվ այդ գործում մեծ դեր են խաղացել հայ մտավորականությունն ու հոգևոր գործիչները: Ժողովրդի սիրելին, սիրված մարդը՝ Մկրտիչ Խրիմյանը ըմբոստացման և ազգային վերազարթոնքի այդ ճանապարհին մեծագույն սերմնացանը եղավ, հայության ինքնագիտակցության և ինքնաճանաչման ջատագովներից մեկը: Մկրտիչ Խրիմյանը,-հուշագրում է Մ. Տամատյանը,- «ինչպէս Աւագ Մասիսը՝ Հայաստանի լեռնագագաթներուն ընդմեջէն»[34] և նրա ուղեկիցները Բեռլինից վերադարձան այն համոզվածությամբ, որ ուժն է ծնում իրավունքը: Նա իր համախոհների հետ կրթեց մի ողջ սերունդ, գրում է Ռուբենը. «…որ տարբեր ոգի մը ունի եւ ներշնչուած է Հայրիկի ազգային ըմբոստ գաղափարներով»[35]:

Ֆիդայական շարժման նախաքայլերն սկսվեցին Տարոն-Սասունում, իսկ այնուհետև ընդգրկեցին այլ վայրեր: Շարժման նախակարապետները Հայաստանի տարբեր վայրերում ձեռնարկում էին գյուղացիության ըմբոստացման առաջին քայլերը: Արևմտահայության տառապյալ վիճակի գիտակցումն ու դրանից դուրս գալու ելքեր փնտրող մտավորականությունը հանգեց զինված պայքարի գաղափարին:

«Հայ ֆիդայու նկարագիրը» Գ՝ ենթագլխում խոսվում է ֆիդայու նկարագրի, կարգավիճակի, նրա գործունեության, կենսակերպի, պայքարի և առհասարակ ֆիդայական շարժման վերաբերյալ մոտեցումների, կարծիքների, բացահայտումների և բնորոշումների մասին, քանզի նրանք շարքային մահկանացուներ չէին ու սովորական առօրյայով չէին ապրում: Քարանձավն էր նրանց կացարանը, լավագույն դեպքում՝ գոմը կամ մարագը: Նրանց անկողինը խոտն էր կամ ձյունը, իսկ քարը՝ նրանց բարձը: Զենքի հետ պսակված, խուրջիններում մի կտոր կորեկի հաց կամ մի բուռ փոխինձ, անպատճառ նաև իրենց պատանքի կտորը, հպարտ, ճակատները թշնամու նենգ գնդակի դեմ բաց, զօր ու գիշեր քայլում էին նրանք լեռներում ու կիրճերում՝ կատարելով իրենց սրբազան պարտավորությունը՝ պաշտպան կանգնել թույլին ու իրավազուրկին:

---

[32] Ճէրէճեան Ե., Մեծն Մուրատ (Համբարձում Պոյաճեան), Ե., 2016, էջ 23 և 39:
[33] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. գ, Թեհրան, 1982, էջ 37:
[34] Տամատեան Մ., Իմ յուշերէս, Պեյրութ, 1985, էջ 47:
[35] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. գ, էջ 39:

Ֆիդայիների կյանքի, դժվար ապրուստի ու մաքառումների մասին մանրամասներ են պատմում ականատեսները, այդ կյանքի դառնությունները տեսած վկաները: Դրանց մասին մեծաքանակ անդրադարձներ կան նաև պատմագիտական աշխատություններում[36]:

Ֆիդայական պայքարի կազմակերպական խնդիրների ու մարտավարության վերաբերյալ անչափ կարևոր են Անդրանիկ Օզանյանի կողմից մշակված խորհուրդները, հորդորները և առաջարկներն ամփոփող «Մարտական հրահանգներ» աշխատությունը[37]:

«Զինատար խմբեր և զենքի փոխադրություն» ենթագլխում հանգամանալից խոսվում է հայդուկային շարժման համար այնքան կարևոր նշանակություն ունեցող զենքի հայթայթման, այն փոխադրելու ուղիների, զինատար խմբերի և այդ ընթացքում տեղի ունեցած հաջողությունների ու ձախողումների մասին: Ֆիդայիների համար օդի նման անհրաժեշտ զենքը թանկ էր ու շատ դեպքերում կյանքի գնով էր ձեռք բերվում[38]: Ֆիդայիներն օգտագործում էին ռուսական, թուրքական, գերմանական և ընդհանրապես այն բոլոր տեսակի զենքերը, որպիսիք ճարում էին: Նրանք օգտագործում էին սմիթ, բրաունինգ[39], վեսսոն, բուլդոգ, պարաբելում, մաուզեր[40] և այլ տեսակի ատրճանակներ, իսկ ավելի հաճախ օգտագործվող հրացանի տեսակներից էին՝ մոսին[41], բերդան[42], այնալու, սուրմալու, չախմախլի[43], վարանդիլ, մարթին,

---

[36] Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Ե., 1976, Եկարեան Ա., Յուշեր Արմենակ Եկարեանի, Պեյրութ, 1985, Գևորգյան Հ., Ազատագրական պայքարի ռազմավարությունը և էջեր նրա հերոսապատումից, Ե., 2012, նույնի, Դրո, Ե., 1999, նույնի Պետոն, Ե., 2000, նույնի Նիկոլ Դուման, Կյանքն ու գործը, Ե., 2002, Ներսիսյան Ա., Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հ. Բ, Ե., 2008, հ. Գ, Ե. 2013, Բեգլարյան Ի., Մահկանաբերդի արծիվը, Սևքարեցի Սաքո, Ե., 2010 և այլն:

[37] Օզանյան Ա., Մարտական հրահանգներ, Ժնև, 1906:

[38] Այդ մասին մանրամասն տե՛ս Հայրենիք, 1923, թիվ 3, էջ 52-56, նաև Գևորգյան Հ., Նիկոլ Դուման, Ե., 2013, Ներսիսյան Ա., «Խանասորի արշավանքը» հոդվածը, Գրիգորյան Հ., Հայ ազատագրական պայքարի մարտավարությունը 1895-1898 թթ., Ե., 2002, նույնի Ազատագրական պայքարի ՀՅԴ մարտավարությունը և ազատամարտի ֆինանսավորման ու զինման խնդիրը (1896-1903 թթ), Ե., 2008 և այլն:

[39] Կոչվում էր նաև Բրավնիկ, որը ատրճանակի տեսակ էր և կրում էր գյուտարարի անունը:

[40] Մաուզերը ավտոմատ խոշոր ատրճանակ էր, որը լինում է 7, 8, 10 փամփուշտանոց, վերջինը կոչվում էր նաև տասհարվածանի կամ տասնոց:

[41] Մոսինը կամ մուսենին ռուսական 5 հարվածանի հրացանի տարատեսակ էր, որով 1893-ից զինված էր ռուսական բանակը, այն 600 ոտնաչափից խփում էր նշանակետին:

[42] Բերդանը, բերդանկան մեկ հարվածանի հրացանի տեսակ էր, որով զինված էր ռուսական բանակը 1870-1891թթ.:

[43] Կայծքարով հրացանի տեսակ էր:

ղափախլի, շեշխանա[44], մոդել[45], պիբոդի, ազալի, լեբել, էվզելի և այլն: Երբեմն ինքնաբուխ, երբեմն նախօրոք ծրագրված ֆիդայիները ձևավորվում էին Մարտական և Զինատար խմբեր: **Մարտական** խմբերի առաքելությունն անարգ թշնամու դեմ հաջող ռազմական գործողություններ իրականացնելն էր, լրտեսներին ու մատնիչներին պատժելը, քրդերին վախեցնելն ու զսպելը: **Զինատար** խմբերը տարբեր ճանապարհներով զենք ու զինամթերք էին տեղափոխում Երկիրէ Սկզբում զինատար ֆիդայիներ են եղել Նիկոլ Դումանը, Խանասորի Վարդանը, Արմենակ Եկարյանը, Սևքարեցի Սաքոն, Վազգենը, Խանը, Կայծակ Վաղարշակը, Աշոտ Երկաթը, Տուրբախը, Սեբաստացի Մուրադը, Սեպուհը, Թորգոմը, Ճարտարը, Գուրգենը, Նևրուզ Օնիկը[46], Փոխիկը և ուրիշներ: Տարբեր վայրերում այդ գործին լծվել էին նաև Կորտկանցի Կյուրոն, Հովոն, Սհոն, ռես Սախոն, Սերոբը, Խաչան գյուղից Բրախոլամը[47] իր երկու տղաների՝ Կնյազի ու Մանուկի հետ, Պզտիկ գյուղից Ղուկասը, ջրաղացպան Գևորգը, Հարությունը, Անձավ գյուղից Պարապը[48], հաճի Կարապետը, մշեցի Հարությունը, Շիրինը, Սիրունը, շամիրամցի Սողոն, Եփրեմը, Պողոս-Պետրոս եղբայրները, էրզրումցի Գեղամը, Դրոն, որ տարբեր տեսակի բեռների միջոցով զենքի ու զինամթերք էր առաքում Հին Բայազետից Իգդիր, ապա Վան ու Շատախ[49] և ուրիշներ: Զինատար խմբերից առավել հայտնի էին «Մրրիկը», «Կայծակը», «Մասիսը», «Դժոխքը», «Որսկանը», «Ճապոնը», «Շանթը», «Արտավազդը», «Արծիվը»[50], որոնք մեծ դժվարությամբ Երկիր էին հասցնում անհրաժեշտ զենքն ու զինամթերքը: Զենքը սահմանի վրայից, ապա մի վայրից մյուսը հասցվում էր գաղտնի և այդպես մինչև Երկրի խորքերը: Զենքի նման ներկրումը Երկիր, Կոմսն անվանել է «ծծման եղանակ»[51]: Կային ռազմամթերքի փոխադրության հետևյալ հայտնի գծերը.

1. Երևան-Կարս-Բասեն-Խնուս-Վարդո-Սասուն,
2. Երևան-Միրզաջան-Արճեշ-Տարոն և Վասպուրական,

---

[44] Կոտորակ, շեշմա կրակող որսորդական հրացանի տեսակ էր:

[45] Ռուսական հրացանի տարատեսակ էր:

[46] ՀԱԱ Իմպերիալիստական պատերազմում գործող հայ կամավորական խմբերի և ջոկատների մասին փաստաթղթերի հավաքածու, ֆոնդ 121, ց. 3, գ. 6, թ. 5:

[47] Խաչանցի Բրախոլամը 60-ը անց հաղթանդամ, շատ առույգ, վարդագույն անկնճիռ դեմքով, երկար ճերմակ բեխերով հայդուկ էր, որը հայ ազատագրական պայքարին մնաց միշտ հավատարիմ, նվիրված, անվախ ու անկաշառ:

[48] Պարապը՝ նույն ինքը Մելոն Վազգենի հին զինվորն էր, որը մի քանի գյուղերի զենքի փոխադրման գործով էր զբաղվում, շատ քչախոս էր, անկաշառ, չնայած ապրում էր աղքատ կյանքով, սակայն միշտ ազնիվ էր ու մաքուր:

[49] Գևորգյան Հ., Դրո, Ե., 1999, էջ 56:

[50] Այդ մասին մանրամասն նկարագրում է Համլետ Գևորգյանն իր Ազատագրական պայքարի..., նշվ. աշխ. մեջ, էջ 208:

[51] Հայրենիք, Բոստոն, 1923, թիվ 3, էջ 82:

3. Երևան-Խոյ-Թադևոս Առաքյալի վանք-Աբաղայի դաշտ-Վան,

4.Երևան-Սալմաստ-Բաշկալե-Հայոց Ձոր-Վան,

5. Երևան-Դավալու-Մակու-Նախավկայի վանք-Խոյ և այլն:

Եթե արդյունավետության տեսակետից դիտարկենք զինատար խմբերի կողմից 1890-1905 թթ. զենքի փոխադրության արդյունքները, ապա կտեսնենք, որ դրանք այնքան էլ գոհացուցիչ չէին: Սակայն, այդ ամենով հանդերձ, կարծում ենք, որ ստեղծված պայմաններում զենք հայթայթելու, սեփական պատիվն ու կյանքը պաշտպանելու այլ ելք ու միջոց իսկապես չկար:

«Կին հայդուկներ» ենթագլխում հանգամանորեն ներկայացվում է հայդուկային շարժմանն ու հայ ազատամարտի այս փուլի ընթացքում հայ կնոջ մասնակցությունն ու դերակատարությունը, վկայակոչվում նրա հերոսացման մեծաքանակ դրվագներ: Ինչպես հայոց բազմադարյա պատմության ողջ ընթացքում, այնպես էլ ազգի համար ճակատագրական ֆիդայական շարժման ժամանակ հայ կինը ևս իր բոլորանվեր մասնակցությամբ անմասն չնաց[52]:

Ցավոք, պարզվեց, որ կին հայդուկների մասին թե՛ հուշագրական, թե՛ մասնագիտական գրականության մեջ քիչ տեղեկություններ կան[53]: Ֆիդայիներ են եղել Աննա Մայրիկը[54], Կուկունյանի խմբից հերոսուհի Մաքոն, Վազգենի՝ Տիգրան Տերոյանի քույրը՝ Զարուհին (Ժենյա)[55], Գիրգոր տեր-Մկրտչյանի խմբից Մարիամ Մակարյանը, Մարզվանում հայտնի ֆիդայուհի Մարինոսը[56], Գևորգ Չաուշի խմբից Զարուհին (Զըրե), Ալվառինջ գյուղից Խանիկը, Ագապին, որը քաջ հայդուկ Տուրբախի կինն էր[57], Սոսե Մայրիկը՝ Աղբյուր Սերոբի կինը[58], Մոկունք գյուղից Եսթերը[59], Մոկունք գյուղից հայտնի է նաև մեկ այլ ֆիդայուհի՝ Մոկունաց (Միրզոյան) Լուսոն, Ցրոնք գյուղից Շուշանիկը (Ցրոնքի Շուշան), որը կռվել է Քեռի Բարսեղի խմբում[60]: Հերոսաբար էր կռվում ռես Գրգոյի հարսը՝ Շաքեն[61]: Հայտնի զինատարներ էին Սևքարեցի Սաքոյի կինը՝ Մարո

---

[52] Յեղափոխական ալպոմ, 1965, էջ 40:

[53] Դրվատելի բացառություններից էր Ռ. Սեվյանի հրապարակումը, տե՛ս Հայ կին գործիչները, «Հայրենիք» ամսագիր, թիւ 12,1937:

[54] Սասունի Կ., Աննա Մայրիկը, Հայրենիք, 1953, թիւ 11, էջ 8-9:

[55] Նիւթեր Հ.Յ.Դաշնակցութեան պատմութեան համար, Պէյրութ, 2007, էջ 246:

[56] Սապահ-ԳիւլեանՍ., Փոքր-Հայքի Յիշատակներ, մասն Առաջին, Չիկագո, 1917, էջ 129-130:

[57] Յեղափոխական ալպոմ, Տուրբախ (Յարութիւն Այվազեան), 1965, էջ 317:

[58] Աւօ, Սօսէ Մայրիկ, Յեղափոխական ալպոմ, 1965, էջ 38:

[59] ՀԱԱ արտասահմանից ստացված վավերագրական նյութերի հավաքածու, ֆոնդ, 420, g.16, գ. 8, թ. 23, էջ 49:

[60] նույն տեղում, էջ 50:

[61] Ճէրէճեան Ե., Մեծն Մուրատ (Համբարձում Պոյաճեան), Ե., 2016, էջ 65:

Ղարաքեշիշյանը[62], Շողերը[63], Ծաղիկը, Ուզունլուծի (Եոզկաթ) հերոսուհի, օրիորդ Գոհարիկ Մարգարյանը, Եղսոն, Հայո-Հայաստանը, Սաթո Օհանջանյանը, Սատան Սիմեյանը, Խազալը, Մավին, Աղավնի Վարպետյանը, Սրբոն, Սևոն, Իսմոն և ուրիշներ[64]:

Փոքր Հայքի ֆիդայուհիներից էր Արամի մտերիմ գործընկեր Թոտորակ գյուղացի Էլմաս Դարբինյանը (Մալեմեզյան), որին կոչում էին «Հօրքուր»[65], Վարդուհին[66] և շատ ու շատ ուրիշներ:

Հաճնում ակտիվ գործունեություն է ծավալել Մեծն Մուրադի՝ Համբարձում Բոյաջյանի քույրը՝ Հայկանուշը, ով «ուսուցչուհի էր եւ այնտեղի յեղափոխական խումբերի մէջ էր, ինչպես եւ իր Ժիրայր եղբայրը»[67]:

«Հայ հոգևորականության մասնակցությունը ֆիդայական շարժմանը» ենթագլխում նշվում է, որ ֆիդայական շարժման հիմնական ուժը արևմտահայ գյուղացիությունն էր: Սակայն հայ հասարակության տարբեր խավեր ևս ակտիվ մասնակցում էին կենաց ու մահու այդ պայքարին: Բնականաբար հայ հոգևոր հայրերը չէին կարող անմասն մնալ հերոսական այդ պայքարից[68]: Այդ շրջանի հոգևոր գործիչների գերակշիռ մասն անցել էր Մ. Խրիմյանի դպրանոցով և հայրենասիրական հրաշալի դաստիարակություն ստացել[69]: Այդ պատճառով էլ գաղտնի և բացահայտ մասնակցում էր կռիվներին, պատսպարում ֆիդայիներին, եկեղեցիները դարձնելով զենքի փոխադրման տարանցիկ կետեր՝ զենքի փոխադրում կազմակերպում: Հայ հոգևորականը հասկացել էր, որ խաչով ու բուրվառով թուրքին ու քրդին դիմակայել այլևս հնարավոր չէր, ուստի իր հոտը պետք է պաշտպաներ նաև զենքով պայքարելով[70]:

Ֆիդայական շարժման աչքի ընկած հոգևորականներից էին վարդապետներ Դավիթը, Հովհաննեսը[71], Վարդանը (Վարդան Հակոբյան)[72],

---

[62] Բեգլարյան Ի., Մահկանաբերդի արծիվը. Սեվքարեցի Սաքո, Ե., 2010, էջ 40, 180, 250:

[63] Արշակ, Հայ յեղափոխութեան արշալոյսի հսկաներէն Պիթլիսցի Մուշեղ, Կ.Պոլիս, 1919, էջ 19:

[64] Բեգլարյան Ի., Հայդուկներ, Ե., 2010, էջ 384:

[65] Սիրվարդ, Արամ Աչըգպաշեան (Հերոս Փոքր Հայքի), Փրովիտէնս, 1957, էջ 115:

[66] Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Մալաթիոյ հայոց, Պէյրութ, 1961, էջ 866:

[67] Վեմ, 1938, յունուար-մայիս, Ռ. Պէրպէրեան, Պատրանքների Շրջանից:

[68] Կոստանդյան Է., Հայ հոգևորականության դիրքորոշումը Զեյթունի 1895թ. ապստամբության նկատմամբ, Լրաբեր 1997թ. թիվ 1, էջ 66:

[69] Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, Պէյրութ 1956, էջ 399:

[70] Առաքելյան Կ., Հայ հոգևորականությունը և ֆիդայական շարժումը, Էջմիածին, Սեպտեմբեր 2005, 86 թերթ:

[71] Երէցեան Ա., Գէորգ Չավուշ, Հալէպ, 1952, էջ 7:

Սիմոնը, Ներսես Խարախանյանը, Հովհաննեսը, քահանաներ Տեր Օհանը[73], Տեր Վարդան Նալբանդյանը[74], Տեր Քերոբը, Տեր Հասրաթը, Տեր Խաչատուրը, Տեր Քաջը:

Այս առումով բնորոշ է, որ կիսանկախ կյանքով ապրող Զեյթունի լեռնական ժողովուրդը սահմանել էր հատուկ չափանիշներ հոգևորական ընտրելու հարցում. «Զեյթունցին քահանա կձեռնադրե այնպիսի մեկը, որը ոչ թե միայն քիչ թե շատ ուսած և հին ու նոր կտակարան ծանոթ ըլլա, ոչ թե միայն իր գաղափարները գրչով կամ խոսքով հայտնելու կարող ըլլա, այլ ֆիզիկապես ալ առողջ և քաջասիրտ պետք է ըլլա: Վերոհիշյալ ուսմունքներե զուրկ ըլլա նե, հոգ չըներ, հերիք է, որ ազգասեր, հայրենանվեր և մանավանդ պատերազմասեր ըլլա»[75]: Զեյթունում ճանաչված քահանա-ֆիդայիներից էին Մարաշի հովվապետ Ղևոնդ Տեր-Նահապետյանը, Թելեմելիք գյուղի քահանա Մարտիրոս Տեր-Մարտիրոսյանը, Կապանի քահանա Տեր Թորոս Շահան – Քեշիշյանը, Պոնտուխի քահանա Տեր Օհանեսը, Ենիճե Գալեի քահանաներ Տեր Կարապետը և Տեր Գրիգորը, Ֆոնուզի Ս.Կարապետ վանքի վանահայր Բարդուղիմեոս Թագագճյանը, Զեյթունի առաջնորդական փոխանորդ Կարապետ քահանա Երկանյանը և այլոք: Բարձր Հայքում մեծ ճանաչում ուներ Էրզրումցի Վեմյան քահանան[76]: Փոքր Հայքում առաքինությամբ առանձնանում էր Դանիել Վարդապետ Բարսեղյանը[77]:

Ֆիդայիների հանգստանալու համար մեծ դեր են խաղացել վանքերն ու եկեղեցիները, որոնցից շատերը դարձել էին ազատասիրության ու ոգեշնչման խորհրդանիշ և վերցված էին օսմանյան իշխանությունների խիստ հսկողության տակ: Այսպիսիք էին Սուրբ Կարապետը, Առաքելոց (Թարգմանչաց) վանքը[78], հատկապես սահմանի վրա գտնվող Դերիկի ու Թադեի վանքերը և այլն:

Ատենախոսության **«ՖԻԴԱՅԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԻԶԲԸ. (1880-1890-ական թթ. առաջին կես)»** գլուխը բաղկացած է չորս ենթագլուխներից:

«Ֆիդայական շարժման առաջին դրսևորումները Տարոն-Տուրուբերանում» ենթագլխում ներկայացված են Սասուն-Տարոնում

---

[72] Կոստանդեան Է., Հայ հոգեւորականութեան դերը Սասունի 1894թ ապստամբութեան մէջ, Ազատամարտ, 1994, թիւ 49, դեկտեմբեր:

[73] Սէմէրճեան Մ., Հրացանակիր քահանան եւ լեռան քարոզիչը, Կ.Պոլիս 1910, էջ 47:

[74] Դրօշակ, 1932, թիւ 9-10, էջ 217:

[75] Զեյթունցի, Զեյթունի անցյալէն և ներկայէն, Ա մաս, Վիեննա, 1900, էջ 152, տե՛ս նաև Կոստանդյան Է., Հայ հոգևորականության դիրքորոշումը Զեյթունի 1895թ. ապստամբության նկատմամբ, Լրաբեր, 1997, թիվ 1, էջ 67:

[76] Չարըգ Ղ., Յուշամատեան Բարձր Հայքի, Կարինապատում, Պէյրութ 1957, էջ 427:

[77] Սիրվարդ, Թորոս Ծառուկեան, Փրովիդենս, 1960, էջ 41, տե՛ս նաև Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Հայ Կեսարիոյ, Գահիրէ,1937, h բ, էջ 1393:

[78] Տե՛ս, Լիւլէճեան Լ., Անդրանիկի բերնով Առաքելոց վանքի կռիւը եւ Խալիլ Պէկի սպանութիւնը աշխատությունը, Պէյրութ, 1966:

տարերայնորեն ծավալված ֆիդայական շարժումների առաջին քայլերը, որոնց մասին արժեքավոր տեղեկություններ ու տեսակետներ են պարունակում Մ. Սերոբյանի, Հ. Գանգրունու, Մ.Տամատյանի[79], Սարգիս և Միսաք Բդեյանների, Կ. Սասունու, Մ. Օրմանյանի[80], Ռուբենի, Մ. Ավետյանի, Մ. Վարանդյանի, Թեոդիկի[81], Ա. Հակոբյանի[82], Ա. Տիրանի աշխատությունները[83]: Հետագայում այս շրջանն ուսումնասիրել են Ծ. Աղայանը[84], Է. Կոստանդյանը[85], Հ. Գևորգյանը[86], Ա. Ներսիսյանը[87] և այլոք, որոնց աշխատություններում մանրամասնորեն խոսվում է ֆիդայական շարժման նախակարապետների մասին, որոնցից էր Մարգար Վարժապետը: Մարդ, ով քաջ վարդենիսցիների ոգին էր և ընտրել էր Խրիմյան Հայրիկի նշած «Երկաթե շերեփի» ճանապարհը: Հանգամանալից ներկայացվում է, որ Մարգար վարժապետը, Արաբոն, Ալիզոնանցի Լևոնը, Մխո Շահենն էին կանգնած Տարոնի հայդուկային շարժման ակունքներում: Իսկ նրանց գործը հետագայում արժանիորեն շարունակեցին Գևորգ Չաուշը, Գալշո Մանուկը, Ավոն, Բուլղարացի Գրիգորը, Ախալցխացի Վարդանը, Խնուսի Մելքոնը, Մարտոն, Դերգեվանքցի Մխոն, Գոմերցի Հովիկը, Պոլեյի Մճոն, Մորուք Կարոն, Չոլոն, Սեբաստացի Մուրադը[88] և շատ ուրիշներ:

---

[79] Տամատեան Մ., Իմ յուշերէս, Պեյրութ, 1985, էջ 31:

[80] Օրմանեան Մ., արքեպիսկոպոս, Ազգապատում, Մասն Գ, 1808 տարիէն մինչեւ 1909, Կ.Պոլիս, 1912, էջ 5022 էջ:

[81] Թեոդիկ, Ամէնուն Տարեցոյցը, ԺԶ տարի 1922, Կ.Պոլիս, 1923, էջ 363:

[82] Յակոբեան Ա., Տարօնի մեծ զաւակը՝ Պօլէի Մճօն, Տարօնի Արծիւ, 1950, թիւ 31, էջ 33:

[83] Սերոբյան Մ., Մեր պայքարը հայ ազատագրութեան ուղիով, Գահիրէ 1948, Գանգրունի Հ., Հայ Յեղափոխութիւնը օսմանեան բռնատիրութեան դէմ (1890-1910), Պէյրութ, 1973, Բդէեան Սարգիս և Միսակ, Հարազատ պատմութիւն Տարօնոյ, Գահիրէ, 1962, Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, Պէյրութ, 1956, Ավետյան Մ., Հայ ազատագրական ազգային հիսնամյա 1870-1920 թթ., հուշամատյան և զորավար Անդրանիկ, Փարիզ, 1954թ, Վարանդեան Մ., Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, Ե. 1992թ, Տիրան Ա., Մխո-Շահէն Սէֆէրեան, Պոսթըն, 1903 թ:

[84] Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Ե., 1976:

[85] Կոստանդյան Է., Հայդուկային շարժում. նախաքայլեր, Ասպար, թիվ 1, Ե., 1993, նույնի Ակնարկներ Արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թթ), Ե., 2005:

[86] Գևորգյան Հ., Դրո, Ե., 1999, Նիկոլ Դուման, Կյանքն ու գործը, Ե., 2013, Պետոն, Ե., 2000, Ազատագրական պայքարի ռազմավարությունը և էջեր նրա հերոսապատումից, Ե., 2012:

[87] Ներսիսյան Ա., Գեվորգ Չաուշի սպանության առեղծվածը, Ե., 1992, Ռուբէն, Ե., 2007, նույնի Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թյուրքական բռնապետության դեմ (1850-1870 թթ.), Ե., 1955:

[88] Ահարոնյան Ա., Մեծն Մուրադը, Գրական թերթ, Ե., 1989, հոկտեմբերի 13:

Ենթագլխում հանգամանորեն խոսվում է նաև Արմենակ Ղազարյանի՝ Հրայր Դժոխքի և Սերոբ Վարդանյանի՝ Աղբյուր Սերոբի հայդուկային գործունեության սկզբնական շրջանի մասին:

«Ֆիդայական շարժման սկիզբը Վասպուրականում» ենթագլխում ներկայացվում են այդ նահանգում հայության թվաքանակի[89], վերազարթոնքի, սոցիալ-մշակութային կյանքի և սկզբնավորված ֆիդայական կռիվների ու մարտնչած ֆիդայիների հետ կապված մանրամասներ: Վասպուրականում հատկապես մեծ էր Մկրտիչ Խրիմյանի հայրենասիրական գաղափարների ազդեցությունը. «Թերևս ինքն ալ չէր գիտակցեր յեղափոխութեան այն ելեւէջներուն, որոնք տեղի ունեցան իրեն սիրելի Վասպուրականի մէջ եւ կապուեցան իր անունին, բայց ազատութեան եւ մարդկային իրաւունքներու մասին իր քարոզածները կազմեցին ապագայ յեղափոխական շարժումներու հիմը…»[90]: Առաջին նվիրյալներից էին Չաթոն, Շերոն, Նախոն, Հովհաննեսը, Վարդանը և ուրիշներ, որոնք այլևս չհանդուրժելով բռնութունը, թալանն ու անարգանքը, անհավասար մարտի ելան: Աննախադեպ քաջագործություններ կատարեցին Չաթո ու Շերո ընկերները, որոնք դարձել էին քրդերի ու թուրքերի սարսափը. «Վերին աստիճանի անվեհեր և յանդուգն գործունէութեան շնորհիւ, Չաթօ-Շէրօ անունը հռչակ ստացաւ Վասպուրականում՝ և սարսափ ձգեց թշնամիների վրայ: Չաթօ-Շերօն դարձան հայ ժողովրդի մարմնացած բողոքը և ոգևորիչները. թշնամի քրդերն անգամ՝ իրենց երգերով դրւատեցին նրանց քաջութիւնները»[91]: Ներկայացվում են նաև Շատախի ֆիդայիներ Փոխիկը, Եվնանը, Հովսեփ Զաքարյանը (Խուլ Հովսեփ), Հարություն Մարտիրոսյանը (հայդուկապետ Յունոն). «Տիպար հայդուկ մըն էր, որ կը գործէր լուռ ու մունջ, լի ահարկու վրէժխնդրութեամբ թուրքերու եւ մանաւանդ քիւրտերու հանդէպ: Անոնցմէ բազմութիւներ մեռցուցեր էր իր անվրէպ գնդակներով»[92]**:**

«Ֆիդայական շարժման առաջին դրսևորումները Բարձր Հայքում» ենթագլուխը նվիրված է այդ տարածաշրջանում սկիզբ առած ֆիդայական շարժմանն ու խմբերի գործունեությանը, որոնց մասին արժեքավոր տեղեկություններ են հաղորդում Ղ. Չարըգի[93], Մ. Նշկեանի[94], Մ. Վարանդյանի[95] աշխատությունները, «Հայրենիք», «Յեղափոխական ալպոմ»,

---

[89] Ռուբեն, նշվ. աշխ., հ. Բ, էջ 73, տե՛ս նաև Բաղալյան Գ., Կ.Պոլսի հայոց պատրիարքության 1912 թ. վիճակագրության տվյալների քննությունը, (Վանի սանջակի օրինակով), Հայաստանի մայրաքաղաքները, գիրք I, Վան, Ե., 2013, էջ 157:

[90] Ռուբէն, նշված աշխ., հ. Բ, էջ 80:

[91] Դրօշակ, 1896, N 18, էջ 144:

[92] Չարըգ Ղ., Յուշամատեան Բարձր Հայքի, Կարինապատում, Պէյրութ,1957, էջ 508:

[93] Չարըգ Ղ., նշվ. աշխ.:

[94] Նշկեան Մ., նշվ. աշխ.:

[95] Վարանդեան Մ., Հ.Յ.Դ. պատմութիւն, էջ 212:

«Հորիզոն» թերթերի ու ամսագրերի տարբեր համարներ[96] և այլն: Բարձր Հայքում հայության վիճակը ևս ծանր էր[97]: Ռուսական սահմանի մոտ՝ Կարսի մարզին կից գտնվող այս երկրամասում, ազատասիրական գաղափարներն հեշտ էին ներթափանցում: Առաջադեմ հոգևորականության և մտավորականների[98] ակտիվ գործունեությունն ու քարոզչությունը մեծապես նպաստում էին երկրամասի հայության ազատասիրական դրսևորումներին: Այս ենթագլխում ներկայացվում են խիզախ հայդուկներ Սեպուհի, Կայծակ Առաքելի, Գրիգոր Տեր-Մկրտչյանի,Արամայիս Ազնավուրյանի, Հունոյի, Տուրբախի, Բալաջանի, Քեռու(Արշակ Գավաֆյան), Տիգրան Օքոնյանի(Շամիլ), Ռուբեն Շիշմանյանի (Դերսիմի Քեռի), Թաթուլի գործունեության մանրամասներ:

Ֆիդայական շարժման սկզբնական շրջանի անվանի դեմքերից էր Հակոբ Սարկավագը: Վերջինիս և Կուկունյանի[99] միջև հետագայում հակասություններ են առաջանում, որի արդյունքում Սարկավագն սպանվում է[100]:

«Ֆիդայական շարժման առաջին քայլերը Փոքր Հայքում» ենթագլխում մանրամասն նկարագրված են Փոքր Հայքում, Կապադովկիայում և Կիլիկիայում ապրող հայության ծանր վիճակը, կրած հալածանքներն ու բռնի ունեզրկումը: Ցույց է տրված, որ նոր թափ առած հալածանքներն սպառեցին հայության համբերությունը, որն էլ Մարզվանում, Սեբաստիայում, Ամասիայում, Կեսարիայում, Մալաթիայում, Թոքատում, Յոզղաթում, Կեմերեկում, Կյուրինում և այլ վայրերում դիմեց զենքի: Հիշատակվում են Փոքր Հայքի ֆիդայական շարժման հայտնի անուններ, որոնցից էին Գալուստ Արխանյանը (Մնձուրի առյուծ), Թորոս Ծառուկյանը (Չելլո)[101], Կյուլպենկ Բարսեղյանը (Համալյան), Գալուստ Անդրեասյանը (Գեղամ, Հակոբ աղա), Յաբեթ Թավաքալյանը (Հովսեփ, Ջան Փոլադ), Դանիել Չավուշը, Աշճի Նշանը, Մուրադը Սեբաստիայի Խոռոխոն գյուղից, Դելի Սարգիսը, Փահլեվանը (Սարգիս Տեմիրճյան), Տոնո

---

[96] «Հայրենիք» ամսագիր, 1960, N 6, հունիս, Յեղափոխական Ալպոմ, 1965, Հորիզոն, 1913, թիվ 109:

[97]Այդ տարածաշրջանի և հատկապես Կարնո աշխարհի մասին հիմնարար աշխատություններ է հեղինակել ակադեմիկոս Ա. Մելքոնյանը: Տե՛ս Մելքոնյան Ա., Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Ե., 1990, նույնի՝ Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Ե., 2003, նույնի՝ Ջավախքը և հայ ազգային ազատագրական շարժումները, Ե., 2011 և այլն:

[98] Նշկեան Մ., Առաջին կայծերը. էջ մը Կարնոյ զարթօնքէն, Ա.Տ., 1930, էջ 117:

[99] Սարգիս Կուկունյանի հեղափոխական գործունեության և «արշավանքի» մասին մանրամասն տե՛ս ԳԱԹ, Բագրատ Նավասարդյանի ֆոնդ , բաժին 3, վավ. 9, թթ. 43-61:

[100] Դրօշակ, թիվ 11-12, էջ 301, 315, 1930: Դիւան Հ.Յ.Դաշնակցութեան, հ. առաջին, Պոսթըն, 1934, էջ 13, Հայրենիք, 1934, թիվ 3, էջ 121-134, թիվ 4, էջ 79-88, թիվ 5, էջ 57-68, թիվ 6, էջ 108-122: Եղիազարյան Կ., Սարգիս Կուկունյանի արշավանքը, Ե., 2016:

[101] Տեփոյեան Պ., Ատոմ Ասլանեան, Պէյրութ, 1988, էջ 88:

Ղազարյանը, Միհրիջան Խանապախանյանը, Փանոս Յաղուբյանը, Արամ Աչըգպաշյանը, Ժիրայր կամ Մորուք Բոյաջյանը, Բարսեղը, Խաչիկ պատվելին, Կարապետ Գըռ (Ղըռ, գարա Օղլան) Փանոսյանը, Աղասին և այլք:

Ֆիդային Փոքր Հայքում հրոսակ էր անվանվում: Նա անձնազոհ էր և նրա միակ նպատակը թալանչիներից վրեժ լուծելը, հայերին թուրքից և քրդերից պաշտպանելը, աղքատներին օգնելը[102]: Փոքր Հայքի ֆիդայական շարժման և խմբերի գործունեության մասին արժեքավոր տեղեկություններ են հաղորդում Ա. Ալպոյաճյանը, Մ. Ավետյանը, Պ. Առաքելը, Սիրվարդը, Ե. Ճերեճյանը, Ա. Արփիարյանը, Սապահ-Գյուլյանը և ուրիշներ: Արխիվներում և մամուլում ևս կան կարևորություն ներկայացնող մեծաքանակ նյութեր[103]:

Փոքր Հայքի ֆիդայիների անվանաշարքը և նրանց հերոսական արարքների մասին կարելի է երկար շարունակել: Հակառակ նրանց նվիրված ու անձնազոհ պայքարին՝ արդյունքները նվազ արգասաբեր եղան: Միևնույն ժամանակ չենք կարող չընդգծել, որ XIX դարի 80-ական թթ. Փոքր Հայքում ստեղծված բազմաթիվ ֆիդայական խմբերը մեծ դեր խաղացին տեղի հայության կյանքի ու գույքի պահպանության, թուրք-քրդական ելուզակների ախորժակը զսպելու և հայության ազատասիրական ոգին վառ պահելու գործում:

Ատենախոսության երրորդ՝ **«ՖԻԴԱՅԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ 1890-ԱԿԱՆ ԹԹ. ԿԵՍԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ 1907 Թ.»** գլուխը բաղկացած է հինգ ենթագլուխներից: Դրանցում ներկայացվում են վերելքից հետո ֆիդայական շարժման աստիճանական մարման գործընթացն ու նշանակալի դրվագները:

---

[102] Ճէրեճեան Ե., Մեծն Մուրատ /Համբարձում Պոյաճեան/, Ե., 2016, էջ 19:

[103] Յիսնամեակ(1887-1937) սօց. դէմոկրատ. Հնչակեան կուսակցութեան, Փրովիտէնս, 1938, նաև Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Մալաթիոյ Հայոց, Պէյրութ, 1961, Ավետյան Մ., Հայ ազատագրական ազգային հիսնամյա (1870-1920) հուշամատյան և զորավար Անդրանիկ, Փարիզ, 1954, Չելլոների մասին տե՛ս նաև Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Հայ Կեսարիոյ, հ Ա, Գահիրէ, 1937, ՀԱԱ ֆոնդ 420, ց. 16, գ. 16, թ. 82, Առաքել Ն. Պատրիկ, Պատմագիրք յուշամատեան Սեբաստիոյ եւ գավառի հայութեան, հատոր Ա, Պէյրութ, 1974, Սիրվարդ, Արամ Աչըգպաշեան (Հերոս Փոքր Հայքի), Փրովիտէնս 1957, Արփիարեան Ա., Հրոսակի մը յիշատակներէն, Նոր կեանք, թիվ 22, 1898, Սապահ-Գիլեան Ս., Փոքր-Հայքի Յիշատակներ, մասն Առաջին, Չիկագո, 1917, Ալպոյաճյան Ա., Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց, Գահիրէ, 1952, ՀԱԱ Ֆոնդ 420, ց. 1, գ. 17, թ. 1, Անդրանիկ, Մարտական հրահանգներ, Ժընեվ, 1906, Երամեան Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, Աղեքսանդրիա, 1929, հ.Ա, Սասունի Կ., Հրայրի դերը հայ ազատագրական շարժման մէջ, Պէյրութ, 1964, Սարերու Ասլանը, (Գէորգ Չաուշի կենսագրավէպը), Պէյրութ, 1966, Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 3, Թեհրան, 1982, Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, գիրք Ա, Ե., 1996, Համբարյան Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, 1898-1908թթ, Ե. 1999, Դրոշակ, 1901, N 4, 11-12 և 1930, N 4, 11-12, Հայրենիք, թիվ 1, 1954, Վարդան Վարդապետը եւ Հրայրը:

Անկման պատճառները, մանրամասներ հայ-քրդական հարաբերություններից, Տարոնում, Վասպուրականում, Փոքր Հայքում տեղի ունեցած ընդհարումների, Առաքելոց վանքի կռվի, սահմանային կռիվների և այլ հարցերի վերաբերյալ[104]:

Նշվում է, որ անհավասար մարտերում զոհվածներին փոխարինելու էին գալիս նոր սերնդի ներկայացուցիչները, որոնցից էին իրենց քաջությամբ, նվիրումով և շրջահայացությամբ օժտված, զուսպ ու հաշվենկատ հայդուկապետեր Անդրանիկը, Տուրբախը, Ռուբեն Տեր- Մինասյանը և այլք:

«Ֆիդայական շարժմանն առնչվող մի քանի կարևոր գործոններ» ենթագլխում մատնացույց են արվում այն կարևոր գործոնները, որոնք էական նշանակություն ունեցան ֆիդայական շարժման վրա:

Ֆիդայական շարժման այս փուլն առանձնանում էր նրանով, որ ասպարեզ իջած ազգային յուրաքանչյուր կուսակցություն իր ծրագրով և մարտավարությամբ իր ազդեցությունն էր թողնում դիմադրական պայքարի վրա: Արմենական, Հնչակյան և ՀՅԴ կուսակցությունները, չնայած իրենց անմնացորդ հայրենանվեր գործունեությանը, ունեցան նաև բազում սխալներ ու վրիպումներ, որոնք ճակատագրական եղան հայ ազատագրական շարժման համար: Կուսակցություններից յուրաքանչյուրը, հանգամանքների բերումով, ավելի ակտիվ էր Հայկական լեռնաշխարհի մի տարածաշրջանում: Արմենականը հիմնադրվել ու գործում էր գլխավորապես Վան-Վասպուրականում: Հնչակյան կուսակցությունն իր ազդեցությունը տարածել էր Կիլիկիայում, Փոքր Հայքում և Փոքր Ասիայի հայաբնակ ու հայաշատ վայրերում, ՀՅԴ-ն՝ Բարձր Հայքում, Վասպուրականում, Ուրմիա լճի շրջակայքում, իսկ հետագայում գրեթե ամբողջ Արևմտյան Հայաստանում: Ռուբենը[105], Վ.Փափազյանը[106], Կ.Սասունին[107], Պ.Տեփոյանը[108], Մ.Ավետյանը[109],

---

[104] ՀԱԱ ֆոնդ 121, ց. 3, գ. 7, թթ. 7, 8,13-16; ց. 3 գ. 3, ց 3, գ. 6, թ. 18-20; ց. 3, գ. 8, թ. 1, 3, ֆոնդ 370, ց. 3, գ. 30, գ. 31, գ. 32, թ. 10, Սասունի Կ., Սասուն-Մուշի կռիվները, Ժնև, 1906, Պատմութիւն Տարօնի աշխարհի, Արշակ, Հայ Յեղափոխութեան Արշալոյսի Հսկաներէն Պիթլիսցի Մուշեղ (1869-1899), Կաթավին սարի եւ Աւերակ ջաղացքի հերոսամարտերը, Կ.Պոլիս, 1919, Նիկոլ-Դուման (Գիծեր իր կեանքէն), Պուքրէշ, 1933, Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն, Փարիզ, 1947, Զարըգ Ղ., Յուշամատեան Բարձր Հայքի, Կարինապատում, Պէյրութ, 1957, Լիւլէճեան Լեւոն, Անդրանիկի բերնով. Առաքելոց վանքի կռիւը եւ Խալիլ Պէկի սպանութիւնը, Պէյրութ, 1966, Հայրենիք 1901, N 124, 4, Շարժում 1902 N 384, Դրօշակ 1929, N 12, 1930 N 1, 2, 3 (Սեւ–Քարեցի Սաքօի ինքնակենսագրութիւնը), Փափազյան Հ., Նահատակ ֆիդայու նամակը, Պայքար օրաթերթ, Բոստոն, Անուշավան Տ.Մկրտչյան 1950, N 123, N 126, Գարուն 1989, N 1:

[105] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Լոս Անճելըս, 1951:

[106] Ավետյան Մ., Հայ ազատագրական ազգային յիսնամեայ (1870-1920) Յուշամատեան եւ զօր. Անդրանիկ, Փարիզ, 1954:

[107] Սասունի Կ., Սարերու Ալանը (Գէորգ Չաուշի կենսագրավէպը), Պէյրութ, 1966, նոյնի Հրայրի դերը հայ ազատագրական շարժման մէջ, Պեյրութ, 1964:

Հ.Երամյանը[110], Մ.Վարանդյանը[111], Ա.Համբարյանը[112], Հ.Սիմոնյանը[113], Ս.Սարգսյանը[114], Ա.Կարապետյանը[115], Գ. Հովհաննիսյանը[116], Գ. Խուդինյանը[117], Ի. Բեգլարյանը[118], Հ. Գևորգյանը[119] անդրադարձել են հայ ֆիդայական շարժման մեջ ազգային կուսակցությունների ունեցած դերակատարությանը: Հարցի լուսաբանման համար կարևոր են նաև ՀՅԴ[120], Հնչակյան[121] և Արմենական կուսակցությունների ծրագրերը[122] Անդրանիկի «Մարտական հրահանգները»[123] և այլ ծրագրային փաստաթղթեր:

Առաջին ենթագլխում խոսվում է նաև հայ-քրդական հարաբերությունների և այդ ուղղությամբ ձեռնարկած քայլերի, ինչպես նաև արդյունքների մասին: Նշվում է ֆիդայական շարժման մեջ առաջացած երկու գաղափարական-մարտավարական ուղղությունների մասին:

«Ֆիդայական շարժման հետագա ընթացքն ու մարումը Տարոն-Տուրուբերանում» ենթագլխում նշվում է, որ Տարոնն Արևմտյան Հայաստանի այն կարևոր գավառներից էր, որտեղ ֆիդայական շարժումներն սկզբնավորման պահից սկսած համեմատաբար կայուն գոյատևեցին և ժամանակի ընթացքում որոշակի վերելք ու աշխուժացում ապրեցին[124]: Այստեղ

---

108 Տեփոյեան Պ., Միհրան Տամատեան 1863-1945, Պեյրութ, 1964:

109 Ավետյան Մ., Հայ ազատագրական ազգային յիսնամեայ (1870-1920) Յուշամատեան եւ զօր. Անդրանիկ, Փարիզ, 1954:

110 Երամեան Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, Աղեքսանդրիա, 1929:

111 Վարանդեան Մ., ՀՅԴ պատմութիւն, Ե., 1992:

112 Համբարյան Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, 1898-1908 թթ., Ե., 1999:

113 Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, հհ. 1, 2, Ե., 1996:

114 Սարգսյան Ս., 1885-1908 թթ. հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը արմենական գործիչների գնահատմամբ, Ե., 2010:

115 Կարապետյան Ա., Արմենական կուսակցություն, թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Ե., 1995:

116 Հովհաննիսյան Գ., Հնչակյան կուսակցության պատմություն1887-1915 թթ.,, Ե., 2012:

117 Խուդինյան Գ., Հայ հեղափոխական դաշնակցություն, Հայոց պատմություն, հատոր III, գիրք առաջին, Ե., 2010:

118 Բեգլարյան Ի., Մահկանաբերդի արծիվը. Սեվքարեցի Սաքո, Ե., 2010, նույնի Հայդուկներ, Ե., 2010:

119 Գևորգյան Հ., Ազատագրական պայքարի ռազմավարությունը և էջեր նրա հերոսապատումից, Ե., 2012:

120 Ծրագիր Հ.Յ. Դաշնակցութեան, Ժընեվ, 1906:

121 Ծրագիր Հնչակեան կուսակցութեան, Լօնդոն, 1897:

122 Ռամկավար Ազատական կուսակցութիւն, հիմնական ծրագրեր, կանոնագրեր եւ վաւերագրեր, կազմեց դոկտ. Վաչէ Ղազարեան, Պեյրութ, 1988, էջ 13:

123 Անդրանիկ, Մարտական հրահանգներ, Ժընեվ, 1906:

124 Գեղամեանց Ե., Հայերի ազատագրական շարժումները ԺԹ դարում կամ հայկական հարցի 6-րդ շրջանը, Բագու, 1915, էջ 434:

ակտիվ գործունեություն են ծավալել Աղբյուր Սերոբը, Հրայր Դժոխքը, Անդրանիկը, Գևորգ Չաուշը և մյուսները: Ֆիդայիները նաև մեծ դեր խաղացին 1890-ականների կեսերին Սասունում թուրքական գազանությունների դեմ ինքնապաշտպանական կռիվների կազմակերպման ժամանակ:

Ընդգծել ենք նաև, որ այս փուլի ականավոր դեմքերից էր դաշնակցական գործիչ Ռուբեն Տեր-Մինասյանը, ով Գևորգ Չաուշի հետ ղեկավարում էր հայդուկային խմբերի գործողությունները: Այս շրջանում տեղի ունեցած կարևոր իրադարձությունների ու կռիվների մասին հանգամանորեն վկայում են Ռուբենը, Կարո Սասունին և մի շարք այլ հեղինակներ ու այլ գրավոր աղբյուրներ[125]: Այս փուլում Գևորգ Չաուշի կողքին էին Անդրանիկը, սասունցի քաջ հայդուկներ Մորուք Կարոն, Պոլեի (կամ Պոլեյան) Մճոն և Չոլոն[126], նրա քաջ ու հավատարիմ զինակիցներից Կորյունը[127] (իսկական անունով Իսահակը):

«Ֆիդայական շարժման մարումը Վասպուրականում» ենթագլուխում պատմվում է այս փուլում Վասպուրականում ֆիդայական շարժման ընթացքում տեղի ունեցած կարևոր, ինչպես նաև մարման փուլի իրադարձությունների մասին: Դրանցից ուշագրավ էր 1897 թ. Խանասորի հայտնի արշավանքը, որը պատասխանն էր Վանից նահանջի ժամանակ հայերի վրա հարձակված և կոտորած քրդական Մազրիկ ցեղի նկատմամբ պատժամիջոց կիրառելը[128]: Արշավանքը մտահղացել էր ու կազմակերպել հայտնի հայդուկապետ Նիկոլ Դումանը[129]: Խանասորը ևս մեկ անգամ եկավ հաստատելու այն պարզ ճշմարտությունը, որ հայության փրկությունն իր հավաքական ուժի, քաջաբար տոկալու և ազատության գաղափարին անմնացորդ նվիրվելու մեջ է[130]: 1904 թ. Վասպուրական է գալիս Ռուբենը և սկսում նախապատրաստական աշխատանք-

---

[125] Աղբիւր Սերոբ եւ Գէորգ Չավուշ, Աթէնք, 1933, Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, Պէյրութ, 1956, Սասունի Կ., Սարերու Ասլանը, Գէորգ Չաուշի կենսագրավէպը, Պէյրութ, 1966, Ներսիսյան Ա., Գեվորգ Չաուշի սպանության առեղծվածը, Ե. 1992, Համբարյան Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում 1898-1908թթ., Ե., 1999, Դրօշակ, 1932, թիվ 6, էջ 123 (Գէորգ Չաուշ):

[126] Տարօնի Արծիւ, 1950, թիվ 31, էջ 3-4:

[127] ՀԱԱ Տեր-Դանիելյան Միսակ Գաբրիելի անվան ֆոնդ, 150, g.1, գ.19, թ.1:

[128] Վարդիվառեան Հ., Մեծ երազի ճամբուն ուղեւորները եւ համապարփակ պատմութիւն Ռամկավար Ազատական կուսակցութեան, հատոր Ա., Նիւ Ճըրզի, 2015, էջ 96: Այս դեպքը լուրջ և ծանր հետևանք ունեցավ երեք քաղաքական ուժերի վրա, հատկապես արմենական և հնչակյան:

[129] Նիկոլ-Դուման (Գիծեր իր կեանքէն), Պուքրէշ« 1933« էջ 6:

[130] Խանասորի արշավանքի մասին տե՛ս Ներսիսյան Ա., Խանասորի արշավանքը հոդվածը, Գրիգորյան Հ., Հայ ազատագրական պայքարի մարտավարությունը 1895-1898 թթ., Ե., 2002, նույնի Ազատագրական պայքարի ՀՅԴ մարտավարությունը և ազատամարտի ֆինանսավորման ու զինման խնդիրը (1896-1903 թթ), Ե., 2008:

ներ տանել ժողովրդի շրջանում: Նշենք, որ 1904-1905 թթ. Վասպուրական եկան դաշնակցական գործիչներ Տիգրանը, Շահպազը, Արամը, Իշխանը, մակվեցի Մեսրոպը, որոնց աջակցում էին տեղում գործող Կոմսը, Թեոսը, Ալեսը, Արմենակը, Գետաշյանը, Փանոսը, Հարությունը, Հաջին, Ղևոնդ Մելոյանը և ուրիշներ[131]: Վասպուրականում ֆիդայական շարժումը շարունակվում է մինչև 1907 թ., որից հետո աստիճանաբար մարում:

«Ֆիդայական շարժումը Բարձր Հայքում 1890-1907 թթ.» ենթագլուխում խոսվում է այս տարածաշրջանում XX դարի սկզբին ֆիդայական շարժման աշխուժացման, այնուհետև մարելու մասին: Բարձր Հայքում իր հերոսական գործունեությունն էր շարունակում հայ ժողովրդի խիզախ զավակ Քեռին, որը հավատարիմ էր իր ժողովրդին, անձնվեր ու ազատության իսկական նվիրյալ[132]: Մյուս հերոսը Տուրբախն էր, որի հասարակական-քաղաքական էությանը բնորոշ էին երկու հիմնական գծեր. անսահման նվիրվածությունը հայ ժողովրդին և երկրորդ՝ բուռն ատելությունը ամեն կարգի բռնության դեմ[133]: Բարձր Հայքում ակտիվ գործունեություն էծավալում նաև մեկ այլ հերոս՝ Ռուբեն Շիշմանյանը (Երզնկացի կամ Դերսիմի Քեռին)[134]:

Ավելացնենք, որ Բարձր Հայքում ֆիդայական շարժման այնպիսի լայնամասշտաբ գործողություններ չարձանագրվեցին, ինչպիսիք եղան Տարոնում ու Սասունում, սակայն այստեղ էլ ամենուր նույն հերոսական ոգին էր իշխում, պայքարելու և սեփական ժողովրդի զոհասեղանին նահատակվելու պատրաստակամությունը:

«Ֆիդայական շարժման մարումը Փոքր Հայքում» ենթագլուխը նվիրված է Փոքր Հայքում ծավալված ֆիդայական շարժման աստիճանական մարման փուլի մանրամասներին: Փոքր Հայքում և Սև ծովի ափամերձ հայաբնակ մյուս վայրերում գործում էին ոչ միայն ազգային կուսակցություններին ենթակա, այլև առանձին ֆիդայական խմբեր, որոնցից էր օրինակ՝ Սեբաստիայում և Մարզվանում գործող «Լևոն» ծածկանունով Բարսեղ Զաքարյանի մարտախումբը: 1895 թ. կոտորածների ժամանակ Արամ Աչըքպաշյանն ու իր զինակիցները կազմակերպում են Շապին Գարահիսարի հերոսական

---

[131] Համբարյան Ա., Ազատագրական շարժումները..., էջ 289, տե՛ս նաև Ռուբեն, նշվ. աշխ., հ. Բ, էջ 172-173:

[132] Չարըգ Ղ., Յուշամատեան Բարձր Հայքի, Կարինապատում, Պէյրութ, 1957, էջ 524:

[133] Տուրբախը իսկական անունով Հարություն Այվազյան կամ Կիրակոսյան, ծնվել էր Էրզրումում ապա տեղափոխվել Կարս: 1894-ից Կարսում սկսում է հայդուկային խմբերձևավորել ու զինել: Երկու տարի անց Խնուսում և Բուլանըխում ակտիվ գործունեություն է ծավալում: Կարս-Երկիր-Կարս ճանապարհը նրա համար դարձել էր սովորական երթուղի: Հայդուկային շարժման մեջ Տուրբախը ավելի աչքի ընկնող դեր սկսեց խաղալ 1900-ական թթ. սկսած, երբ Սասունում նախապատրաստվում էին ինքնապաշտպանության: Այդ օրերին Տուրբախը զբաղված էր զենք հայթայթելով:

[134] Վարանդեան Մ., ՀՅԴ պատմութիւն, էջ 212:

ինքնապաշտպանությունը, որի շնորհիվ տեղի հայությունը փրկվում է թուրք-քրդական կոտորածներից: Այնուհետև նա, իր զինակիցներից Բարսեղի հետ անցնելով Սեբաստիայի շրջան, փորձում է զինել տեղի գյուղացիությանը[135]:

Փոքր Հայքում իր ակտիվությամբ աչքի էին ընկնում նաև Արմենակ Հայրապետյանի և Մինաս Օղլուի հայդուկային խմբերը[136]:

1904-1905 թթ. հայդուկային շարժման մի քանի խոշոր գործիչների նահատակությունից հետո պայքարի վերելքի շրջանին սկսում է փոխարինել մարման փուլը, և ի վերջո 1907 թ. ասպատակային պայքարը Փոքր Հայքում ամբողջովին դադարում է:

Եզրակացություններում ամփոփվել են ատենախոսության արդյունքները:

XIX դարի վերջին քառորդին, հատկապես 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմից և նրան հաջորդած Սան-Ստեֆանոյի դաշնագրի ստորագրումից ու Բեռլինի վեհաժողովից հետո եվրոպական տիրույթներից զրկված Օսմանյան կայսրությունը՝ վախենալով նաև ասիական տիրույթները կորցնելուց, խստացրեց բռնաճնշումներն Արևմտյան Հայաստանում: Օսմանյան կայսրության կարևորագույն խնդիրներից մեկը դարձավ Հայկական հարցը, որի լուծմանն իշխանությունները ձեռնամուխ եղան՝ «չկա մարդը-չկա խնդիրը» սկզբունքը որդեգրելով: Նրանք սկսեցին բռնարարքներ գործադրել հայությանն իր բնօրրանից դուրս մղելու, նրա ինչքը յուրացնելու և ֆիզիկապես ոչնչացնելու, այսինքն՝ հարցի լուծման «թուրքավարի» լուծելու համար՝ օգտագործելով հետամնաց ցեղերին, հատկապես՝ քրդերին: Այլևս չհանդուրժելով դա՝ հայն ըմբոստացավ և դիմեց զենքի: Այսինքն՝ «սկսուած հայ յեղափոխութինը պատմական պահանջ մըն էր հայ ժողովուրդին համար», ուստի խոնարհվելով նրանց հիշատակին՝ «միեւնոյն ժամանակ մատնանշենք անձերու կամ խումբերու կողմէ գործուած աններելի սխալները, տեղի ունեցած խակ, յախուռն եւ յիմարական գործունեութիւնները՝ ի խրատ եւ ի զգաստութիւն ապագայ սերունդներուն»[137]: Ամփոփելով նշենք, որ՝

1. արխիվային վավերագրերի, որոնց մի զգալի մասն առաջին անգամ են շրջանառության մեջ դրվում, տպագիր սկզբնաղբյուրների և մասնագիտական գրականության մեջ առկա փաստական հարուստ հենքի վրա ներկայացնելով Արևմտյան Հայաստանում ու Օսմանյան կայսրության հայաշատ վայրերում տիրող ծանր իրավիճակը ֆիդայական պայքարն սկսվելուց առաջ և ընդգծելով, որ արևմտահայության սոցիալ-տնտեսական, իրավական, քաղաքական կացությունը չափազանց վատթարացել էր, հանգել ենք այն եզրակացության, որ

---

[135] Սիրվարդ, Արամ Աչըքպաշեան, էջ 112:

[136] Հովհաննեսյան Գ., Հնչակյան կուսակցության պատմություն 1887-1915 թթ., Ե., 2012, էջ66:

[137] Ճէրէճեան Ե., նշվ. աշխ., էջ 19:

ամենուր տիրող բռնությունների, իրավազրկության, կոռուպցիայի, տնտեսական թալանի և ունեզրկման պայմաններում դիմանալ այլևս հնարավոր չէր,

2. այդ իրավիճակում տարերային կերպով ծավալվեց ազգային-ազատագրական շարժումը, որի ռազմական դրսևորումը եղավ ֆիդայական շարժումը: Տարերայնորեն սկսվելով Տուրուբերան նահանգում՝ այն ընդգրկեց նաև Վասպուրականը, Բարձր Հայքը, Փոքր Հայքը, Կիլիկիան և այլ շրջաններ,

3. շեշտել ենք, որ ժողովուրդը լավ զինված չէր, իսկ զենքի հայթայթումը կատարվում էր կյանքի գնով: Հայ ազգային կուսակցությունները փորձում էին տարբեր ճանապարհներով զենք ու զինամթերք տեղափոխել Երկիր: Սակայն զենքի պակասը եղավ և մնաց ֆիդայական շարժման պարտության հիմնական ու կարևորագույն պատճառներից մեկը,

4. հայ ֆիդայական շարժմանը ոչ մի եվրոպական երկիր աջակցություն չցուցաբերեց, ինչպես դա եղավ բալկանյան ժողովուրդների դեպքում, երբ Ռուսաստանը եղբայրական ձեռք մեկնեց իր ազգակից ժողովուրդներին,

5. հայ քաղաքական ուժերի միջև ռազմավարության, մարտավարության և տարբեր այլ հարցերի, ուրջ որոշակի հակասություններ և տարաձայնություններ կային, որոնք ևս իրենց բացասական ազդեցությունն էին թողնում շարժման վրա,

6. այդ դժնդակ պայմաններում ֆիդայական շարժումը օբյեկտիվ անհրաժեշտություն էր և ժողվրդի հոգու պոռթկումը: Այլ խնդիր է այդ պայքարի գնահատումը արդյունավետության տեսանկյունից: Ֆիդայական շարժումը ևս մեկ անգամ ապացուցեց այն փիլիսոփայությունը, որ հայը միշտ ունեցել է ազատության ոգի, պայքարելու կարողություն և ուժ,

7. հանգամանքների բերումով և զանազան պատճառներով Արմենական և Հնչակյան կուսակցությունների թուլացումը լայն ասպարեզ բացեցին ՀՅԴ-ի համար, որը փաստորեն դարձավ ֆիդայական շարժման հիմնական ղեկավար ու գործող ուժը և պատվով կատարեց իր այդ պատմական առաքելությունը,

8. սուլթան Համիդն ու Բարձր Դուռը արևմտահայության բնաջնջման և Հայկական հարցի լուծման գաղտնի պլաններ էին մշակել և դրանք օր առաջ գործի դնելուն ուղղված քայլեր էին ձեռնարկում: Կարծում ենք, որ այդ պլաններն ամբողջովին և միանգամից հնարավոր չեղավ իրականացնել, քանի որ ֆիդայական շարժումը խոչընդոտեց և միառժամանակ հետաձգեց այն,

9. հայ ֆիդայական շարժումը եղավ հայոց պատմության ազատագրական մաքառման հերոսական և փառավոր էջերից մեկը,

Անկասկած բազում մարտերում կոփված ֆիդայիների մարտական ավանդույթներն էին, որոնք մեծապես պայմանավորեցին հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի մեծագույն նվաճումը 1918 թ. մայիսյան հերոսամարտերում և հարյուր տարի անց՝ XX դարի վերջերին, երբ հայ ժողովուրդը իր հայրենիքի մի մասի՝ Արցախի ազատագրության համար կրկին ոտքի ելավ՝ «ադրբեջանցի»-թուրք զավթիչներից ազատելու, Հայաստանին

միացնելու նպատակով: Չնայած 100-ամյա ժամանակաբաժանմանը շատ նմանություններ կան մերօրյա և XX դարասկզբի ֆիդայական շարժումների միջև:

XX դարի վերջին անպայման հաղթելու վճռականությամբ կրկին ողջ հայությունն ստիպված ոտքի ելավ և բռունցքվեց ադրբեջանական (որ նույնն է՝ թուրքական) զավթիչների դեմ: Հայ ժողովուրդն արցախյան պատերազմի տարիներին՝ 1988-1994 թթ., տվել է մոտ 6000 զոհ: Նրանք բոլորն էլ գիտակցաբար իրենց անձը Արաբոյի, Մուշեղի, Սեպուհի, Չավուշի, Չելլոների և մյուսների պես նվիրաբերեցին հայրենի հողի ազատագրությանը: Ի տարբերություն Օսմանյան կայսրության դեմ մարտնչող հայդուկների, մերօրյա ֆիդայիների պայքարը պսակվեց հաղթանակով և ազատագրվեց դեռևս XX դարի սկզբին խորհրդային ամբողջատիրական վարչակարգի կողմից անարդարացիորեն Ադրբեջանին բռնակցված Արցախը: Սերունդների համար այդ պայքարը օրինակելի և հայրենասիրության լավ դաս էր:

Ատենախոսության հիմնական դրույթները շարադրված են հեղինակի հետևյալ հոդվածներում.

1. Արևմտահայոց ազգային սահմանադրությունը, «Վասն արդարութեան» /իրավական-գիտամեթոդական հանդես/, Ե., 2003, N 39, էջ 6-9:
2. Սան Ստեֆանոյի պայմանագրից մինչև Բեռլինի վեհաժողով. Հայկական հարցի իրավական կարգավորումը, «Վասն արդարութեան» /իրավական-գիտամեթոդական հանդես/, Ե., 2004, N 1-2, էջ 103-105:
3. Հայ հոգևորականությունը և ֆիդայական շարժումը, «Էջմիածին», Էջմիածին, 2005, N 9, էջ 85-92:
4. Հայ ֆիդայական շարժման պատմությունից, «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 2006, N 1, էջ 211-218:
5. Սփյուռքահայ պատմագիտությունը հայ հայդուկային շարժման վերաբերյալ, «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 2010, N 1-2, էջ 131-144:
6. Հայ հայդուկային պայքարը և Անդրանիկ Օզանյանը, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրները, միջազգային գիտաժողովի նյութեր, ապրիլի 21, 22, 2015թ, Երևանի Հյուսիսային համալսարանի հրատարակչություն, Ե., 2016թ, էջ 116-121:
7. Հայ կնոջ դերը հայդուկային պայքարում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 2016, N 1, էջ 144-150:

АРАКЕЛЯН КАМО МГЕРОВИЧ

АРМЯНСКОЕ ГАЙДУКСКОЕ ДВИЖЕНИЕ В 1880 – 1907 ГГ.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 - „История Армении „
Защита состоится 7- ого марта 2017 г., в 14^{00} на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

В конце 19 – ого века в Османской империи, в частности, в Западной Армении и в других местах империи, где были заселены много армян, социально – экономическое, правовое, психологическое и политическое житьё ухудшилось. Везде были насилие, бесправие, взятки и коррупция, разбой хозяйства и всё это настолько углублялось, что больше не возможно было терпеть. В этой ситуации со стихийным образом развёртывалась национально – освободительная борьба, которая известна по имени фидаинская, гайдуцкая борьба и была объективной необходимостью и вспышкой духа народа.
Гайдуцкая борьба помогла повысить национальную самооценку армянского народа и создала идею организации самообороны. Во время этой священной борьбы погибли многие храбрые воины и стали бессмертными со своими подвигами. Но они доказали, что лучше гибнуть как герой, чем существовать как жалкий раб.
В этом деле важную роль сыграли те молодые интеллигенты, педагоги, священники и чиновники, которые получили образование в Европе и в России. Первые шаги гайдуцкой борьбы начались в начале 1880-х годов в Тарон - Туруберане, далее распространялись в Васпуракане и наконец, то во всей Армении, в маленьком Айке и тех территориях Османской империи, где были населены армяне. Крестьянство было главной движущей силой и основным источником национально-освободительной борьбы западных армян.
Армянин осознанно поднял свою голову после пятивекового тяжелого рабства и трубил в трубу вестника революции. Из уст армян слышно было “свобода “, народ бурился и бросал вызов кровожадному властелину. Высоко развевающийся флаг святого дела окрасился кровью армянских героев. Гайдуки действовали в Западной Армении и почти во всех местах азейских губерниях османской империи, заселенных армянами, начиная с Киликии до озера Урмия.
Оно стало один из героических и славных страниц освободительной борьбы армянской истории. В этих ситуациях гайдуки помогли сто тысячам людям, а в их присутствии турецких Солдатов и чиновников охватило страх. Султан Амид и Высокая Дверь разрабатывали тайный план об истреблении западных армян и о решении Армянского вопроса и днём раньше для реализации этого плана предпринимали меры. Считаем, что им не возможно было реализовать эти планы вполне и сразу, потому, что гайдуцкая борьба препятствовала и в то же время отложила это до трагического 1915 года.
В общем, в хронологическом порядке включает отрезок времени половина 80-х годов XIX века до 1907 года. То есть из источников движения до знаменитой борьбы Сулуха и смерть Геворга Чауша, после этого те бои, которые почти одна четверть века

беспокоили, а иногда запугивали Султану, туркам, курдов, в западной Армении постепенно стали гаснуть. Это стал настоящим прецедентом и героической школой как во время майских боев 1918 года, так и в дальнейшем, особенно для поколения, которое одержал победу во время арцахской битвы в конце века. Если в конце века одна горсть храбрецов встали на борьбу против османского государство, где вероятность достижения победы была очень мала, то в конце XX века армянский народ, восстановив свою свободу и одержав победу против азеринов-турков, освободил важную часть своей родины – Арцах. Победе весьма содействовал создание регулярной армянской армии, которое стало истиной ценой больших усилий.

Убежденны, что для молодого поколения хорошими примерами патриотического воспитания стали клятва, безупречный образ жизни, моральное изображение фидаина.

Никакая европейская страна не показала поддержку армянской гайдуцкой борьбе, как это было в случае освободительной борьбы балканского народа против османских тюрков, когда Россия оказала помощь своим родственным народам. Развертывавшая гайдуцкая борьба в разных губерниях Западной Армении была разъединена. Действующие гайдуцкие группы не могли помочь друг другу и сражались отдельно, а это дало возможность противнику легко и отдельно – отдельно уничтожить их.

Тщательное изучение архивных документации, профессиональных и вспомогательных литератур, связанных с гайдуцкой борьбой, приводили к тому, что движение имело следующие этапы развития.

А) Зарождение,

Б) Процесс (течение) и кульминационный пункт,

Д) Постепенное погашение.

Для нас исходным является то, что гайдуцкое движение, начавшееся в Маленькой Азии, в Западной Армении и в тех местах Османской империи, где были заселены армяне, необходимо было рассматривать в одном обобщение, что и делали. А также мы попробовали сравнить их и этим образом выяснить те особенности, которые были между армянскими и другими, особенно, балканскими освободительными движениями. Наша задача была подробно выяснить обстоятельство возникновения (происхождения) гайдуцкой борьбы, а также причины неудач, понять позицию государств в отношении движения, представить игравшую роль и значение армянской гайдуцкой борьбы. Мы попробовали целиком представить историю гайдуцкой борьбы, а также

1. выяснить и пустить в оборот важные, но пока что невыясняемые подробности, связанные с гайдуцкой борьбой,

2. в гайдуцкой борьбе уточнить имевшую роль армянского духовенства, разных круг общества и армянских женщин,

3. выяснить связь между гайдуцкой борьбы и национальными партиями, имевшую влияние друг над другом и именно направляющую роль партий,

4. пустить в научный оборот в значительной мере новые фактические материалы, документации и публикации о некоторых вопросах, событиях и лицах гайдуцкой борьбы.

ARAKELYAN KAMO MHER

ARMENIAN FIDAYI STRUGGLE FROM 1880 to 1907

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of "History of Armenia", 07.00.01

The defense of the dissertation will be held on March 7, 2017, 14^{00}, at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History NAS RA (Yerevan, Marshal Bagramyan ave. 24/4).

SUMMARY

At the end of the 19th century in the Ottoman Empire, especially in Armenia and in the other parts of the empire that were densely populated by Armenians, the socio-economic, legal, psychological and political condition of Western Armenians got worse. There were violations, unrighteousness, bribery and corruption, economic loot everywhere. It was so much rooted that it was impossible to bear it any more. In that situation a national-liberty struggle came forth which is known as Fidayi Struggle. This struggle was an objective necessity and came from the bottom of the heart of the people.

Fidayi struggle increased self-assessment of Armenians at the national level and developed the idea of self-defense. During the fights a lot of bold worriers martyred. However they proved that it was better to be martyred like heroes than to continue living like slaves.

A lot of young scientists, pedagogues, clergymen and politicians who got education in Europe and Russia had an important role in this movement. The latter sparkled in the state of Taron-Turuberan at the beginning of the 1880s and then spread over Vaspoorakan, and after all throughout the whole territory of Armenia, the Lesser Hayk, as well as over some other parts of the Ottoman Empire populated by Armenians. Village people were the driving force and main source of the national-liberation struggle of Western Armenians.

After 5 century's slavery life Armenians took their weapons by their own will in order to get freedom. One could hear ''freedom'' being uttered by Armenians. The flag of freedom fighters was colored by the blood of Armenian heroes. Fidayis struggled in Western Armenia and Ottoman Empire as well as in almost all Asian provimnces that were inhabited by Armenians , starting from Kilikia to Lake Urmia.

This movement became one of the heroic and glorious pages of the peculiarities of the struggle in the history of Armenia. In these difficult times fidayis helped hundreds of people and the Turkish soldiers and officers became fearful in their presence. Sultan Hamid developed a secret plan to exterminate Western

Armenians and thus give a solution to the Armenian Question. Therefore they took measure for the implementation of their plan as soon as possible. It was impossible for them to implement their plan at once and completely as the fidayi struggle became an obstacle for them, by postponing it till the tragic year of 1915.

All in all Fidayi struggle embraces the period that began in the 19th century, in the middle of 1880s, and continued till 1907, i.e. from the beginning of the movement to the well-known fight of Sulukh and the death of Gevorg Chaush, after which all these fights that bothered and frightened the sultan, Turkish pashas and Kurd beks for about a quarter century, gradually came to their end..

This incident became a heroic school both during the time of the fights of 1918 as well as for the future especially for the generation that won a victory during Artsakh war by the end of the century. If a few Armenians fought against the Ottoman Empire at the end of the century when the possibility to win was very little, then at the end of the 20th century Armenians would have obtained their freedom and liberated Artsakh, an important part of their homeland. The victory had an impact on the creation of the regular Armenian army. We believe that the fidayi's oath, impeccable lifestyle, moral description, virtuous behavior and pride set a good examples for patriotic education of new generation.

No European country supported the Fidayi struggle unlike Russia that supported the struggle of Balkan nations against the Ottoman Turks. The Fidayi struggle was not united throughout different provinces of Western Armenia. The fidayi groups were unable to help each other, thus struggling separately, which enabled the enemy to destroy each of them one by one easily.

The in-depth study of the archive documents, relevant literature on Fidayi struggle reveals that the movement had the following phases of development:

a. Emergence
b. Process and Culmination
c. Gradual extinction

It is noteworthy that the Fidayi movement that began in Asia Minor, Western Armenia and those parts of the Ottoman Empire that were inhabited by Armenians, is to be studied as a whole and we tried to do so. We also tried to compare and reveal all the particularities of the liberation movementstypical of Armenian and other nations.

Our task was to reveal the circumstances of the emergence of the Fidayi struggle, as well as the causes of failures, to understand the standpoints of other states regarding the movement, and to represent the role and importance of the Armenian Fidayi struggle. We tried to represent the whole history of the Fidayi struggle as well as:

1. to reveal important and not yet discovered details of the Armenian Fidayi struggle.

2. to clarify the role of the Armenian clergy, society circles, as well as women in the Fidayi struggle.
3. to clarify the relations between the Fidayi Struggle and national parties, as well as the impact they had on each other, especially the directive role that the parties had.
4. to introduce new facts, documents and publications on some issues, events and people related to the Fidayi struggle.